№ 31 ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 13

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 13 № 31

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1909 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը՝ 80 կ., և առաքման ծախք՝ 20 կ.:

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Горгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Այսօր, ուրբաթ, փետրվարի 13-ին
Տեղի կունենայ
ԱԼԷՔՍԷՅ ԼԻՍՕՎՍԿՈՒ
ԵՐԿՐՈՐԴ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ
«Ազգային գաղափարը ռուսաց նոր գրականութեան մէջ» թեմայով, որը կը նուիրվի
ԳՕԳՕԼԻՆ
Սկիզբն երեկոյեան ժամը 8-ին
Կասսան բաց է առ. ժամը 11-ից մինչև 2-ը և երեկոյեան ժ. 6-ից մինչև դասախօս. վերջը.
ԱՆՕՆՍ.—Վաղը, շաբաթ, փետրվարի 14-ին Լիսօվսկու III դասախօսութիւնը, որը կը նուիրվի Ա. Պ. ՉԵԽՕՎԻՆ:
(առ) 130. 2—3

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
(ամբուլատորային ընդունելութիւն)
եկող հիւանդների համար ամէն օր, Վօկզալնայա 8, տ. Ենֆիաճեանցի:
Տելեֆօն 695.

Ե. Գ. ՖԷԴՕՐՕՎ ամէն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, $8\frac{1}{2}$-ից մինչև $9\frac{1}{2}$, ներքին հիւանդ.:

Վ. Դ. ԴԱՄԲԱՇԻՁԷ ամէն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:

Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամէն օր, $11\frac{1}{2}$-ից մինչև $12\frac{1}{2}$ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ:

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամէն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը:

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամէն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:

Բ. Օ. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամէն օր, բացի կիրակի օրերից, 2—$2\frac{1}{2}$ ժ., աչքի հիւանդ.:

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճար խորհրդի համար 50 կոպէկ:

Օպերացիաները և խորհրդատուութիւնը ըստ համաձայնութեան:

Շուտով բացվելու է ստացիօնարական բաժանմունք 30 մահճակալներով:

(ա. օ.) ա. 38. 100—23

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պետական Դումայում մի բառ նորութիւն էր պատգամաւորների համար:

Դա «մաջառական» բառն է:

Ռուսական պարլամենտական բառարանը կովկասեան հարցապնդումի առիթով հարստացաւ այդ տեսակ մի բառով:

Ի՞նչ մտքով է գործածված մաջառական բառը:

Այն մտքով, ինչով մենք կովկասցիներս յիշում ենք «գօլիցինեան ռէժիմ» խօսքերը:

Մաջառական գործելակերպ, մաջառական սիստեմ, մաջառական քաղաքականութիւն բառերը նշանակում են բռնի վերաբերմունք դէպի օտարացեղները և այլակրօնները:

Այդ բառի գործածութեան նախաձեռնութիւնը պատկանում է Բօբրինսկուն. յետոյ նոյնը որոշ իմաստով կրկնեց Միլիւկովը:

Եւ բառը ստացաւ ժողովրդականութիւն:

Բանն այն է, որ վերջին ամիսներում, երբ ծագեցին բօսնիական և սերբիական հարցերը, շատ ռուսներ և նրանց մէջ Պետական Դումայի մի քանի անդամներ այցելեցին աւստրիական սլաւօններին և տեղնուտեղը ծանօթացան այնտեղի հանգամանքների և տրամադրութիւնների հետ:

Ռուսները, ականատես լինելով աւստրիական սլաւօնների վիճակին, վշտանալով այն բանից որ արիւնակից սլաւօնները այնտեղ ճնշման և հալածանքների են ենթարկվում մաջառների կողմից և տեսնելով այդպիսի քաղաքականութեան վնասակար հետևանքները, շուտ ըմբռնեցին, որ մաջառական քաղաքականութիւնը ասիականութիւն և անգթութիւն է, որ մաջառական քաղաքականութեամբ չէ կարելի շահել ժողովրդի սիրտը, մօտենալ նրան և գրաւել ու հրապուրել նրան:

Սլաւօնների օրինակը ուսանելի եղաւ Բօբրինսկու և ուրիշների համար: Նրանք համոզվեցին, որ այդպիսի քաղաքականութիւնը վնասակար է թէ հպատակ և թէ տիրող ազգի համար:

Արդարև՝ այդպիսի քաղաքականութիւնից աւստրիական սլաւօնները չը կորցրին իրանց ազգութիւնը և միևնոյն ժամանակ մաջառներն էլ ոչինչ չը շահեցին, բացի հպատակ ժողովրդի բուռն ատելութիւնից և զզւանքից:

Սլաւօնների շրջանում ռուս այցելուները նկատեցին, որ Ռուսաստանի անունը այն ժամանակ կարող է լուսաճաճանչ և վեհազօր երևալ, երբ նա իրագործի մարդասիրական քաղաքականութիւն և հռչակվի իբրև ազատագրված մի երկիր, որը չէ կրկնում իր սահմաններում այն քաղաքականութիւնը, որ մաջառները գործադրում են Աւստրիայում:

Արդեօք պարլամենտական տեսակէտով յարմա՞ր է թէ անյարմար մաջառական ածականի այնքան գունաւոր արտասանումը, այդ մենք չենք քննում, և դա կարևոր չէ ներկայ դէպքում: Այստեղ խնդիրը յայտնի քաղաքականութեան բնորոշումն է, որ կատարված է:

Եւ անշուշտ Ռուսաստանի ժողովուրդը թէ հպատակ և թէ տիրող տարրերով երջանկութեան և համեբաշխ բարգաւաճման կը հասնի այն ժամանակ, երբ դէն շպրտված կը լինի մաջառական ներքին քաղաքականութիւնը:

Մենք կովկասցիներս շատ ենք տանջվել մաջառական ռեժիմից և միևնոյն ժամանակ դրանից ոչինչ չէ շահել մեր քաղաքակից ռուս ազգը, որի անունով գործադրվել է սպանիչ քաղաքականութիւնը:

Նա դատապարտված է թէ պատմութեան և թէ մարդասիրութեան առաջ:

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 6 փետրվարի

Այսօր քաղաքում բազմաթիւ թռուցիկներ են ցրված, որով պահանջում են շուկան բոլորովին փակել: Խուսափողներին սպառնում են սպանել:

Թեհրան են եկել բազմաթիւ կովկասցի յեղափոխականներ:

Ռաշտի յեղափոխականների դէմ ուղարկված զօրամասը կանգ է առել կիսաճանապարհին և չէ համարձակվում առաջ գնալ:

Ռաշտի ազգաբնակութիւնը պահել է կ. Պօլսից Պարսկաստան վերադարձած շահի եղբայր Շաօ-էս-Սալթանէին և հրատարակել նրան հիւսիսային Պարսկաստանի կառավարիչ:

Շաօ էս-Սալթանէն իր եղբօր հին հակառակորդներից է և ձգտում է իր ձեռքը ձգել գահը: Նրա գալը մեծ անհանգստութիւն է պատճառել շահին, որը սպասում էր իր եղբօրը իբրև հիւրի, այլ ոչ հակառակորդի: («Р. С.»)

—

Թեհրան, 6 փետրվարի

Էյն-ուդ-Դօվլէի զօրքերը աւելի խիտ կերպով են մօտեցել Թաւրիզին:

Ենթադրում են, որ Սաթթար-խանը տակտիկական զիջումներով թոյլ տուեց, որպէսզի նրանք աւելի ևս մօտենան:

Սկսվեց լուրջ կռիւ:

Պարսկական բարձր շրջաններում վկայում են, որ հէնց նոր ստացվել են տեղեկութիւններ Թաւրիզին մօտիկ տեղի ունեցած մեծ կռւի մասին, որը վերջացել է՝ որպէս թէ յեղափոխականների պարտութեամբ և Սաթթար-խանի գերի ընկնելով:

Ասում են, որ շահի զօրքերի հրամանատար Էյն-ուդ-Դօվլէն անձամբ կրակել ու մահացու կերպով վիրաւորել է Սաթթար խանին փորից: Երբ Սաթթար-խանը վայր է ընկնում ձիուց, զինւորները իսկոյն շրջապատում են նրան և շղթայակապ անում:

Թաւրիզը յայտարարված է գրաւված շահի զօրքերով: Այդ տեղեկութիւնները սակայն «Р. С.» լրագրի թղթակցի կողմից դեռ ևս ստուգված չեն, ուստի հաղորդվում են վերապահութեամբ:

—

Թաւրիզ, 11 փետրվարի

Անջումանը ստացել է տեղեկութիւններ, թէ կառավարչական ձիաւորները և քիւրդերը Րահիմ-խանի ղեկավարութեամբ գրաւել են Սօֆիան գիւղը, Թաւրիզի և Մարանդի միջև: Այդտեղ ամրացած Սաթթար խանի մի քանի կողմնակիցները, որոնք մտադիր էին մնալ Թաւրիզ, յետ մղվեցին գիւղից յամառ դիմադրութիւնից յետոյ և փախան: Ձիաւորները թալանեցին ապրանքը Սօֆիանում: Էյն-ուդ-Դօվլէն, հիւպատոսների բողոքի պատճառով, թոյլատրեց պօստի առաքումը:

(«Հ. Գ.»)

—

Ջուլֆա, 11 փետրվարի

Սաթթար-խանի՝ նախկին կռիւների մէջ ծանր վիրաւորվելու մասին լուրերը ճիշդ չեն: («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 11 փետրվարի

Գրէյը համայնքների պալատին ներկայացրեց մի գրաւոր պատասխան պարսկական գործերին վերաբերող ռուսական յուշագրին.

«Անգլիական կառավարութիւնը,—ասում է Գրէյը,—ռուսաց կառավարութեանը յայտնեց, որ նրա կարծիքով լաւագոյն տակտիկան, որպիսին պէտք է ունենան Անգլիան և Ռուսաստանը, դա Պարսկաստանի ներքին գործերից հեռու մնալն է. սակայն, ընդունելով որ Ռուսաստանի համար գուցէ դժուար է այդօրինակ գործելակերպ ունենալ, որովհետև նրա սահմանները բաղխվում են Պարսկաստանի այն մասի հետ, որ ամենամեծ յուզմունքների ասպարէզն է ներկայումս, Անգլիան պատրաստ է գործել Ռուսաստանի հետ միասին որոշ ուղղութեամբ:

«Անգլիան կարծում է, որ մինչև Պարսկաստանում ներկայացուցչական կազմ չը հաստատվի, երկրի դրութիւնը հազիւ թէ լաւանայ: Բրիտանական կառավարութիւնը առաջարկեց Ռուսաստանին մասնանիշ անել շահին, որ եթէ սահմանադրական կազմ չը շնորհվի, այն դէպքում նա չէ կարող աջակցութիւն գտնել անգլիական և ռուսական կառավարութիւնների կողմից, որոնք ստիպված կը լինեն միջոցներ ձեռք առնել իրանց շահերը ապահովելու համար: Այնուհետև Անգլիան Ռուսաստանին հաղորդեց, որ եթէ անհրաժեշտ լինի պարսկական փոխառութիւն կնքել, նրա պայմանները պէտք է մանրազննին քննութեան ենթարկվեն, ըստ որում Անգլիան չէր համաձայնի որևէ կերպ մասնակցել փոխառութեանը առաջ՝ քան ընտրեալ ժողովից հաստատութիւն գտնելը»:

Վերջում Գրէյը յարակցեց, որ ռուսաց և անգլիական կառավարութիւնների սկզբունքի մէջ տարբերութիւն չը կայ այն նպատակների և պայմանների մասին, որպիսիները պէտք է նկատի առնել: («Հ. Գ.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիեննա, 11 փետրվարի

Բօրսայում տիրող տրամադրութիւնը ճնշող էր կառավարութեան այն հերքումի ազդեցութեան տակ, թէ պատերազմի լուրերը սխալ են: Հերքման բանաձևը, որ սկզբում դրութիւնը վտանգաւոր էր համարում, հանգստութեան փոխարէն հակառակ տպաւորութիւն թողեց: Միայն վերջում բօրսան մի փոքր լաւացաւ:

«Ֆրեմդէնբլատը» պատասխանելով սերբիական մամուլի յարձակումներին, ասում է. «Մեր քաղաքականութեան տակտիկան սերբիական լրագրական թշնամանքի նկատմամբ, այսինքն խաղաղութիւնը պահպանելու և անսահման համբերատարութիւն ունենալու մեր ցանկութիւնը չէ փոխվել: Այս փաստը յայտնի է Եւրոպայում, և ոչ խեղաթիւրման միջոցով, ոչ էլ զանազան կեղծիքներով չէ կարող հանվել Եւրոպայի հասարակական քննադատութիւնից: Սերբիական քաղաքականութիւնից դէպի բօսնիական հարցը չը կայ ոչ ճանապարհ, ոչ կամուրջ, ուստի և Սերբիան, հէնց որ մենք ճշտութեամբ որոշեցինք մեր դրութիւնը Բօսնիայում, սկսեց զինվել: Սերբիական սպառազինման նպատակների մասին վկայում են սերբիական բարձրաստիճան և յայտնի քաղաքական գործիչների, ինչպէս նաև Բելգրադի լրագիրների չեշտակի յայտարարութիւնները: Սերբիան կամենում է ունենալ էտապի քաղաքականութիւն. այսօր պահանջում է Բօսնիայի մի մասը, որպէսզի յարմար դէպքում ձեռքը մեկնէ ամբողջ Բօսնիային: Կասկածից դուրս է, որ Սերբիայի ամբողջ քաղաքականութիւնը և նրա սպառազինումը ուղղված են բացառապէս մեր դէմ: Եթէ Սերբիան կարծում է, որ նրա ռազմական քաղաքականութիւնը պէտք է ուղղված լինի մեր դէմ, ապա ուրեմն նա իբրև անկախ պետութիւն, պէտք է ինքը մենակ լուծէ այդ հարցը: Միւս կողմից հասկանալի է, որ Աւստրօ-Ունգարիայի քաղաքականութիւնը չէ կարող չը հականերգործել նրանով, ինչով որ նման դէպքում անխուսափելի կը համարէր պատասխանել ամէն մի մեծ պետութիւն, որ թանգ է գնահատում իր արժանապատւութիւնը: Այդ մասին պէտք է մտածեն Բելգրադում, ինչպէս նաև չը պէտք է աչքաթող անեն նաև մեծ պետութիւնները»:

(«Հ. Գ.»)

—

Վիեննա, 11 փետրվարի

Վիեննայի մամուլի տրամադրութիւնը աւելի՝ հանգիստ է: Բօրսան, սակայն, թոյլ էր և լաւացաւ միայն վերջում այն տեղեկութիւնների ազդեցութեան տակ, թէ Աւստրիան Սերբիային առաջարկել է երկաթուղագիծը աւստրիական զինւորական հսկողութեան ներքոյ:

Բուդապեշտի մամուլը աւելի մռայլ է: Պօստի, հեռագրի և հեռախօսի վրա դրված է զինւորական ցէնզուրա: Բոլոր լրագիրները խօսում են դրա մասին:

Ունգարական լրագիրների մեծ մասը հաւաստացնում է, որ մօբիլիզացիան վճռված բան է: («Հ. Գ.»)

—

Բուդապեշտ, 11 փետրվարի

Արտասահմանեան լրագիրների այն յօդուածների առիթով, թէ Աւստրիան պէտք է տնտեսական վարձատրութիւն տայ Սերբիային, «Կօրրէսպօնդէնց-Բիւրօ» լրագիրը հաղորդում է, որ, «Բուդապեշտի Հիրլապ» լրագրի տեղեկութիւնների համաձայն, որ արտաքին գործերի մինիստրութեան տեսակէտը յանգում է այն բանին, որ այդպիսի զիջումների մասին խօսել կարելի է միայն այն դէպքում, թէ Սերբիան կը հրաժարվի հողային պահանջներից, ներկայումս տնտեսական վարձատրութիւնները ոչինչ տպաւորութիւն չեն գործի, բայց կը բարուքէին գործերի դրութիւնը: («Հ. Գ.»)

—

Բելգրադ, 11 փետրվարի

Նոր կաբինէտի կազմը. առաջադէմ Նօվակօվիչ—մինիստր-նախագահ, հին-արմատականներ Միլօվանօվիչ—արտաքին գործերի մինիստր, Միլօյլավլէվիչ—ներքին գործերի մինիստր, Պրօտիչ—ֆինանսների, Պաշիչ—հասարակական աշխատանքների, երիտասարդ արմատականներ Ստօյանօվիչ—լուսաւորութեան, Պրոդանօվիչ—առևտրի, նացիօնալիստ Ռիբարաց—արդարադատութեան. զինւորական մինիստրի պաշտօնի համար անուանում են դիվիզիայի հրամանատար գնդապետ Մարինօվիչին: Փետրվարի 11 ին կաբինէտը կը յայտարարէ և կը շեշտէ սկուպշչինայում, որ նոր կառավարութեան կազմի մէջ ներկայացուցիչներ ունեն բոլոր կուսակցութիւնները, որովհետև դրութեան լրջութիւնը պահանջում է սերբիական ժողովրդի և ազգային սկուպշչինայի միահոգութիւնը: Արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ նոր կառավարութեան գլխաւոր պրօգրամն է լինելու սերբիական շահերի պահպանութիւնը և պաշտպանութիւնը: Այդ նպատակով կառավարութիւնը շուտով կը ներկայացնէ մեծ պետութիւններին սկուպշչինայի արած պահանջները: Կառավարութիւնը, որը սկուպշչինայի ցանկութիւնների արտայայտիչն է համարվում, վայելում է նոյնպէս թագի անսահման վստահութիւնը: («Հ. Գ.»)

—

Բեռլին, 6 փետրվարի

Դիպլօմատիական շրջաններում յամառ լուր է պտտում, որ իբր Ֆրանց Յօսէֆ կայսրի և գահաժառանգ էրցհերցօգ Ֆրանց Ֆերդինանդի միջև լուրջ տարաձայնութիւն է ծագել սերբիական քաղաքական պատճառով:

Վերջինս, որ պատերազմի կողմնակից կուսակցութեան պարագլուխն է, պահանջում է անմիջապէս պատերազմ յայտարարել Սերբիային: Մինչդեռ այդ բանին վճռականապէս հակառակում է կայսրը:

Վերջին օրերս այդ տարաձայնութիւնը փոխվեց բացարձակ հակառակութեան, և էրցհերցօգ Ֆերդինանդը ստիպված եղաւ հեռանալ Վիեննայից և վերաբնակվել կրկին իր Սանտ-Մօրից ամրոցում: («Р. Сл.»)

—

Բեռլին, 6 փետրվարի

Այսօր տեղիս բոլոր թերթերը ստացել են մի սենսացիօն հեռագիր Բելգրադից, որով հաղորդվում է, որ երբ երէկ Պաշիչը յայտնել է հին արմատականների կլուբում՝ թէ Պետր

Թագաւորը ցանկութիւն է յայտնել հրաժարվել գահից յօգուտ արքայորդի Գէօրգիի, որովհետև նա այլևս իրան անզօր է զգում տանելու կուսակցական կռիւները։

Պետր Թագաւորը յոյս ունի, որ գահաժառանգ Գէօրգին կարող է շուտով վերջ տալ այդ պառակտումներին ու վերականգնել խաղաղութիւնը երկրի մէջ։ («Р. Сл.»)

—

Լոնդոն, 11 փետրվարի

Րէյտէրին հաղորդում են Պեկինից, որ փետրվարի 8-ին ռուսները փակեցին չինական բոլոր կրպակները և պահեստները Խարբինից դէպի արևմուտք գտնվող երկաթուղային գծի գլխաւորագոյն կենտրոններում, որովհետև չինացի տէրերը հրաժարվեցին վճարել երկաթուղային իշխանութիւնների սահմանած տուրքերը։ Հաղորդում են, որ բոլոր առևտրական գործողութիւնները, բացի օտարազգիների ձեռքով կատարվողներից, կանգ են առել երկաթուղագծի տարածութեամբ։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 11 փետրվարի

Լորդերի պալատ։ Հնդկաստանի գործերի ստատս-սեկրէտար Մորլէյը առաջարկեց դիմել Հնդկաստանի օրինագծի երկրորդ ընթերցման. օրինագծում ասված է, որ Հնդկաստանի դրութիւնը մեղմացել և հասարակական կարծիքը հանգստացել է։ («Հ. Գ.»)

—

Կոպենհագէն, 11 փետրվարի

Ֆոլկէտինգում շարունակվեց պետական պաշտպանութեան օրինագծի քննութիւնը։

Պետական պաշտպանութեան մինիստրը ասաց, որ Կոպէնհագէնի մօտ կառուցվող ցամաքային գիրքերը անհրաժեշտ են չէզոքութիւնը պահպանելու համար. Նրանց ցամաքային ամրութիւններ չէ կարելի համարել։

Արտաքին գործերի մինիստրը ընդգծեց, որ չէզոքութիւնը չը պաշտպանել՝ նշանակում է նրան խորտակման տանել. բոլոր մեծ պետութիւնները ցանկանում են, որպէսզի Դանիան հնարաւոր եղածով կայուն ամրութիւններ ունենայ։ («Հ. Գ.»)

—

Բելգրադ, 11 փետրվարի

Բելգրադեան բոլոր շրջանները ուրախագին ողջունում են կոալիցիոնական կաբինետը։ Լրագիրները շնորհակալութիւն են յայտնում սկուպշչինայի և բոլոր քաղաքական կուսակցութիւնների գործողութեան հայրենասիրական եղանակի համար, որ հնարաւորութիւն տուեց Սերբիային միաձայն պաշտպանել ժողովրդի շահերը։ Ոմանք առաջարկում են կազմել սկուպշչինայում օվացիա վաղվայ նիստի համար, երբ Նովակովիչը զեկուցումն կանէ կառավարութեան կողմից։ Քաղաքական շրջանները ենթադրում են, որ աւստրո-ունգարական հարցը պէտք է լուծվի շուտով, այլապէս անխուսափելի է զինուորված ընդհարումը Աւստրիայի հետ։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 11 փետրվարի

Այն հանգամանքի առիթով, որ հէնց այսօր, երբ ամբողջ մամուլը խօսում է ռուսական քաղաքականութեան փոփոխման մասին արևելեան հարցի վերաբերմամբ և դրան հետևող բօրսայի վատ դրութիւնը, հրատարակվեց հաղորդագրութիւն՝ Բերլինի բօրսայում ռուսական երկաթուղային արժեթղթերի տուրևառի թոյլտուութեան մասին. բօրսային շրջաններում այդ համարում են մի նշան, որ վկայում է Ռուսաստանի խաղաղասիրական տրամադրութիւնը։

«Բերլինէր-Տագէբլատտը» «Ռուսաստանը ու գերմանական դրամային շուկայ» յօդուածում շատ էլ խիստ չէ խօսում գերմանական կապիտալների նոր տեղաւորման մասին, ինչպէս սովորաբար անում է գերմանական ֆինանսական աշխարհի մասնակցութեան համար ռուսական ֆինանսական ձեռնարկութիւններում, և ընդգծում է, որ իրապէս երկաթուղային արժեթղթերի տոկոսների վճարումը կատարվել է մինչև իսկ ամենածանր ժամանակներում Ռուսաստանի կողմից, սակայն յայտնում է, որ գերմանական կապիտալը, որ դրված է ռուսական արժեթղթերի մէջ, բաւականաչափ մեծ է, և ռուսական արժեթղթերի քանակի աւելացումը այսուհետև չը պէտք է ողջունվի ուրախութեամբ։ Սակայն, վերջացնում է լրագիրը, մնում է ցանկալ, որ այն վստահութիւնը, որ տածում է, ինչպէս երևում է, միջազգային բանկային աշխարհը դէպի քաղաքական դրութիւնը, չը լինի թէ խաբուսիկ դուրս գայ։ («Հ. Գ.»)

—

Փարիզ, 11 փետրվարի

Կառավարութիւնը համաձայնեց ընդունել Գերմանիայի առաջարկած հարցը, որպէսզի ներկայումս Տօգօ-Դագոմէյի սահմանագլխում աշխատող ֆրանս-գերմանական մասնաժողովին յանձնարարվի համաձայնութեան գալ միւս վիճելի կէտերի վերաբերութեամբ։ («Հ. Գ.»)

—

Չիկագօ, 11 փետրվարի

Նորից սկսվեց «Ստանդարդ-օյլ-կօմպանի» ընկերութեան գործի քննութիւնը. 29 միլիօն դոլլարի տուգանքը, որին դատապարտված էր ընկերութիւնը, բարձր ատեանը փոխեց, ցոյց տալով որ այն դէպքում, երբ ընկերութիւնը մեղաւոր ճանաչվի, տուգանքի ամենամեծ չափը, որին կարող է ենթարկվել, 720,000 դոլլար է։ («Հ. Գ.»)

—

Գվայակվիլ (Էկուատոր, Րիօ-Բամբայի մօտ), 11 փետրվարի

Ճանապարհորդական գնացքը 100 ֆուտ բարձրութիւնից վայր ընկաւ. 25 հոգի սպանվեցին, 40 հոգի վիրաւորվեցին։ («Հ. Գ.»)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պօլիս, 6 փետրվարի

Մամուլը, քաղաքական և պարլամենտական շրջանները աշխուժ խօսակցութեան նիւթ են դարձրել նախկին մեծ վեզիր Քեամիլ-փաշայի գործունէութիւնը։ Մեծամասնութիւնը նրա կողմն է և համարում է նրան զոհ կուսակցական պառակտումների։

Մամուլի երեք խոշոր օրգաններ, «Թանինը», «Սաբահը» և «Իկդամը» իրար հետ սաստիկ պօլեմիկա են մղում և մերկացնում երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտի գործունէութեան անդրկուլիսային կողմը։

«Իկդամը» պահանջում է, որպէսզի պարլամենտը ասէ իր ազդեցիկ խօսքը կօմիտէտին և վերջ դնէ նրա միջամտութեանը կառավարչական գործերում, քանի որ պետական աշխատանքներ կատարելու են կոչված ժողովրդական ներկայացուցիչները։

—

Կ. Պօլիս, 11 փետրվարի

Ամբողջ մամուլը զբաղված է սկսված աղմկալից դատով Սոֆիայի նախկին կօմիսար Նէջիբ-փաշայի դէմ, որին յետոյ առանձին լիազօրութիւններ էին տրված դաւադրութեան մասին քննութիւն կատարելու համար։ Նրան մեղադրում են այն բանում, որ նա տանջանքների է ենթարկել հայերին։ Մեղադրեալը յայտնեց, որ ինքը գործիք էր միայն Եըլդըզ-Քեօշկի ձեռքում, և ինքը հրաման չէ տուել տանջանքներ գործադրել։ Նէջիբ-փաշան երեկ քիչ էր մնում ամբոխի զայրոյթի զոհը դառնար։

Մինիստրների խորհուրդը հաւանութիւն տուեց աւստրո-Թիւրքական համաձայնութեան արձանագրութեանը և դիմեց սուլթանին համապատասխան իրադէով։ («Հ. Գ.»)

—

Բելգրադ, 11 փետրվարի

Զինուորական մինիստր նշանակվեց գեներալ Ժիվկովիչ։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 11 փետրվարի

«Ենի Գազէթայի» տեղեկութիւնների համեմատ, Բօլգարիայի կողմից վարձատրութիւն տալու հարցի առիթով Գրեյ առաջարկեց Բ. Դրանը մի լուծում, որը հաշտեցնում է Ռուսաստանի առաջարկութիւնը Թիւրքիայի հակաառաջարկութեան հետ։ Լուրերին նայելով, Րիֆաթ փաշան Պետերբուրգ կերթայ այդ առարկայի վերաբերմամբ բանակցելու համար մինիստր Իզվոլսկու հետ։ «Ենի Գազէթա» լրագիրը յոյս ունի, որ Անգլիայի բարեկամական միջնորդութիւնը լուծել կը տայ բօլգարական պատերազմական վարձատրութեան հարցը, և կարծում է, որ Բ.-Դուռը համակրութեամբ կը վերաբերվի այդ առաջարկութեանը։

«Սաբահ» լրագիրը հաղորդում է, որ զինուորական մինիստրը, մինիստրների խորհրդի նիստից յետոյ, յայտնեց, որ հրաժարական կը տայ, որովհետև ֆինանսների մինիստրը և ֆինանսական գործակալը համաձայն չեն իր առաջարկած զինուորական բիւջէտը մեծացնելուն։ «Շուրայի-Իւմմէթը» հաղորդում է, որ զինուորական բիւջէտը, 31,000 զինուորներին արձակելու պատճառով, կը պակասի 8 ½ միլիօն ֆունտով։ («Հ. Գ.»)

—

«Երիտասարդ Հայաստանը» հաղորդում է, որ Մարաշի կողմից Թիւրքիայի պարլամենտի անդամ է ընտրված հնչակեան գործիչ Ղևոնդ քահանան։

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պօլիս, 2 փետրվար

Դէպքերը, վարչապետին բոլորտիքը, կը պտըտին ու կը շփոթուին։ Պարլամենտը, անհամբեր լսելու թէ ինչ պատճառներով հրաժարեցուած են պատերազմական և ծովային մինիստրները, հեռախօսով՝ խորհրդարանին ներկայանալու ստիպողութիւնը զգացուց անոր։ Ճիշդ նոյն բոպէին՝ վրայ հասաւ վարչապետին ինքնագիր նամակը, որով կը հաղորդէր թէ, հակառակ իր տուած խոստումին, չէր կրնար նոյն օրը ներկայ գտնուիլ և իր պատճառաբանութիւնները ընել եղած հարցապնդումներուն վրայ, որովհետև կարի կարևոր զբաղմունքներ ունեցած էր. միևնոյն ատեն կը խոստանար ներկայ գտնուիլ ամսուն 4-րդ օրը, չորեքշաբթի։ Խորհրդարանը, սաստիկ նեղացած, իր անվստահութեան քուէն կուտայ վարչապետի մասին 8-ի դէմ 192 ձայնով։ Հաւանական կը կարծուի թէ այդ՝ ութը հայ երեսփոխաններուն քուէներն են։

Այդ ցոյցերուն վրայ՝ վարչապետը իր հրաժարականը կուտայ։ Բայց թէ սուլթանը պիտի ընդունի՞ այդ հրաժարական թէ ոչ, յայտնի չէ։

Այդ դէպքին վրայ կարծիքները կը բաժնուին հետևեալ կերպով. ոմանք կառարկին թէ վարչապետը պէտք է, առանց առարկութեան, ներկայանար խորհրդարանին և բացատրութիւններ տար, թէ ինչ հիմնական պատճառներէ դրդուած երկու գլխաւոր մինիստրները զադրեցուցած էր պաշտօնէ։ Ուրիշներ ալ կը պատճառաբանեն, թէ խորհրդարանը պէտք է համբերէր լսելու վարչապետը և աճապարանք չընէր իր անվստահութեան քուէն տալու։

Այսպէս, թէև վարչապետը տակաւին ոչինչ յայտարարած պաշտօնապէս և խորհրդարանն ալ դեռ ոչինչ լսած, մէկը իր հրաժարականը տուած է և միւսն ալ փութացուցած իր անվստահութեան քուէն։

Հարցին մէջ գլխաւոր հիմ բռնուած է սուլթանին գահընկէցութիւնը։ Գլխաւոր դերակատարներ կը համարուին հրաժարեցուցած երկու մինիստրները։ Իսկ գործին գլուխը կամ կեդրոնական ոյժը կը կազմէ օսմանեան կօմիտէն։ Վարչապետը, համոզուած թէ քանի որ սուլթանը, հաւատարիմ իր սահմանադրական ուխտին, լռիկ կը նստի իր պալատին մէջ և օժանդակ մըն է սահմանադրութեան գոյութեանը, անտեղի կը գտնէ դաւադրանքի դիմել և կայսրական աթոռին վրայ նստեցնել ուրիշ մը, որուն ինչ ըլլալը յայտնի չէ։

Այդ կարծիքներու վրայ հիմնուած վարչապետը, լռիկ և առանց աղմուկի, յանկարծ հրաժարեցուցած է երկու մինիստրները։

Կօմիտէն, իր պաշտօնական յայտարարութիւնով, կը հերքէ իրեն վերագրուած ենթադրութիւնները։

Վարչապետը չի կարծուիր որ դրական փաստեր, արդարացուցիչ դօկումենտներ կարենայ մէջտեղ դնել, բայց միևնոյն ատեն ունեցած ըլլալու է իր համոզիչ ներքին պատճառները։

Օսմ. կօմիտէն թէև ինքզինքը որբացած կը հռչակէ, բայց ոտքով գլխով գործին տակն է։ Անկէ առաջ չյաջողեցաւ իր ծրագրին մէջ, որ ուղղուած էր Քեամիլ փաշայի դէմ. վարկաբեկ եղաւ «Հուկուկը Ումումիյէի» դէմ լարուած ծուղակին մէջ. վարկաբեկ եղաւ հանուրին առջև։ Իրեն կը մնար նոր դէպքերով նոր ազդեցութիւն ձեռք բերել, և ատ տեղի կունենար յեղափոխական գործ մը արդիւնաւորելով։

Դահլիճին բոլոր անդամները, դատական, ելևմտական և ներքին գործերու մինիստրները, երկու քրիստոնեայ մինիստրէ զատ, հրաժարեցան իբրև դժգոհութեան ցոյց մը վարչապետին դէմ, թէ քմահաճօրէն վարուած էր։

Ժամէ ժամ կը սպասենք, թէ ինչ ուղղութիւն պիտի բռնէ սուլթանը, պիտի մերժէ՞ վարչապետին հրաժարականը եթէ ոչ պիտի ընդունի։

Ահմէդ Րիզա սուլթանի հետ երկար տեսակցութիւն մը ունեցած է. խօսուած է Քեամիլ փաշայի հրաժարականի մասին, և որոշ բան մը չի լսուիր։

Քանի մը օրէ ի վեր Կեսարիայէն վախի լուրեր կը հասնին։ Թիւրք խուժանը, իբրև թէ լուր ստացած որ Զէյթունի հայերը Թիւրքերու կոտորած ըրած են, կառավարութեան պաշտօնատունը կը շրջապատէ և հրաման կուզէ գեաւուրներէն վրէժ լուծել իբրև փոխարինութիւն։ Պատրիարքը, առաջնորդէն առած հեռագրին վրայ, ներքին գործերու մինիստրին դիմողութիւն և պահանջումներ կընէ։

Կառավարութիւնը, պաշտօնական հեռագիրներ փոխանակելէ ետքը, հարկ կը տեսնէ զօրք հասցնել։ Նոր սպարապետը ճամբայ հանել տուած է քանի մը վաշտ զօրք, ինքնին յուղարկ երթալով մինչև Փոքր-Ասիոյ երկաթուղիին կայարանը և ողջերթ մաղթելով զօրքերուն։

Այս շաբթու Միացեալ Ընկերութեան համար կը տրուի պարահանդէս մը։ Մասնախումբ մը, որ կազմուած է արդէն մայրաքաղաքիս բոլոր գլխաւոր անհատութիւններէն, պիտի յաջողի տալ միջազգային ձեռնարկի մը հանգամանքը։ Կը յուսացուի որ ձեռք բերուի գոհացուցիչ արդիւնք մը։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՐՋՄՏՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

II

Մեր նախորդ յօդուածում մենք պարզաբանեցինք թէ Կ. Պօլսի հայ մամուլի և թէ ազգային երեսփոխանական ժողովի շատապողականութիւնը, որով, առանց պաշտօնական հաստատ տեղեկութիւնների սպասելու, հրատարակեցին Իզմիրլեան պատրիարքին իբրև արդէն հաստատուած կաթողիկոսական պաշտօնի մէջ և սկսեցին զբաղվել այն հարցով, թէ, ում ընտրել նրա տեղ։

Մի քանի լրագիրներ նոյնիսկ հարց յարուցին՝ կարո՞ղ է արդեօք Իզմիրլեանը մնալ պատրիարք, քանի որ նա այլևս օսմանեան հպատակ չէ։ Այդ լրագիրները նեղութիւն չը կրեցին նոյնիսկ իրանց կողքին գտնվող Բ. Դռնից իմանալու, թէ արձակվա՞ծ է Իզմիրլեանը օսմանեան հպատակութիւնից թէ՞ ոչ, և եթէ մտածէին այդ մասին, նրանք կիմանային, անշուշտ, որ նա դեռ չէ արձակված։

Իրողութիւնը սակայն այս է, որ հարկ ենք համարում հասցնել Կ. Պօլսի հայ մամուլի և ազգային երեսփոխանական ժողովի գիտութեան։

Իզմիրլեան պատրիարքը դեռ չէ հաստատված կաթողիկոս։ Ոչ մի տարակոյս չը կայ, որ համազգային ընտրութիւնը կը վաւերացվի կայսերական ուկազով, բայց մինչև ուկազի հրատարակութիւնը մի շարք պաշտօնական ձևականութիւններ կան, որ պէտք է կատարել և որոնք բաւական երկար ժամանակ են տևում։ Էջմիածնի սինոդից ընտրական արձանագրութիւնները ստանալուց յետոյ՝ Կովկասի Փոխարքան իր դիտողութիւններն և կարծիքն է արձանագրում առաջարկեալ երկու կանդիդատների մասին և ուղարկում ներքին գործերի մինիստրին։ Վերջինս նոյնպէս տեղեկութիւններ է ժողովում երկու կանդիդատների մասին և բանակցում է արտաքին գործերի մինիստրի հետ, որ նոյնպէս պէտք է յայտնէ իր կարծիքը։ Ապա Կ. Պօլսի ռուսաց դեսպանի միջոցով երկու կանդիդատների համաձայնութիւնն է հարցվում, թէ յօժա՞ր են նրանք ընդունել կաթող. պաշտօնը, ի դէպս, եթէ կայսրը կամենայ հաստատել նրանցից մէկին։ Նոյն առաջարկը անվում է և Բ. Դրանը, թէ յօժա՞ր է սա արձակել հպատակութիւնից նրան, ում կայսրը կը հաստատէ կաթողիկոս։ Այս առաջարկների պատասխանները Պետերբուրգում ստացվելուց յետոյ, մինիստրների խորհուրդը քննում է գործը և որոշում առաջարկված երկու կանդիդատներից որին հաստատել կաթողիկոս ամենայն հայոց, կամ եթէ անհնարին է գտնում նրանցից որևէ մէկին հաստատել՝ որոշում է բեկանել ընտրութիւնը և նոր ընտրութիւններ նշանակել։ Ապա մինիստրների խորհրդի որոշումը ենթարկվում է կայսրի հաստատութեանը։ Եւ երբ հրատարակվում է կայսերական ուկազը հաստատութեան մասին, այդ ուկազը Փոխարքայի միջոցով հաղորդվում է Էջմիածնի սինոդին, և վերջինս կարգադրում է հրաւիրել ընտրեալին Էջմիածին՝ օծումն ընդունելու։ Պէտք է իմանալ, որ օսմանեան հպատակութիւնից արձակման և կայսերական հաստատութեան ակտերը կատարվում են միևնոյն օրը։ Այն օրը, երբ Պետերբուրգում պէտք է հրատարակվի ռուսաց կայսրի ուկազը կաթողիկոսի հաստատութեան մասին, նոյն օրը և Կ. Պօլսում կը հրատարակվի սուլթանի իրադէն՝ հպատակութիւնից արձակելու մասին։

Տեղիք կայ ենթադրելու, որ Իզմիրլեան սրբազան մայիսից առաջ չէ կարող գալ Էջմիածին, հետևաբար մինչև մայիս նա կարող է վարել պատրիարքական պաշտօնը, և զուր տեղ Կ. Պօլսում իրար են անցել, թէ ում ընտրեն այժմ, ով լինի տեղապահ և այլն։

Բայց դատապարտելի է մանաւանդ ոմանց ձգտումը Կ. Պօլսում՝ աշխատել որ Իզմիրլեանը չը հաստատվի կաթողիկոս, այլ հաստատվի Դուրեանը։ Իրանց այդ ձգտումը այդ անձինք բացատրում են նրանով, ինչպէս հաղորդում է «Արևելք» լրագիրը, որ իբր թէ Իզմիրլեան իբրև պատրիարք աւելի օգտակար կարող է լինել հայ ազգին, քան իբրև կաթողիկոս, որ իբր նա ֆիզիքապէս քայքայված է և եթէ Էջմիածին երթայ «պարզապէս տոպրակ մը ոսկոր պիտի տանին դնեն Խրիմեանի աթոռի վրայ»։ Նոյնիսկ դիմողներ են եղել օտարներին և այս մտքով յայտարարութիւն արել։

Արդեօք այս ամենը հետևանք է անկեղծ համոզմունքի, թէ՞ հետևանք է ինտրիգների այն մարդկանց, որոնք, կամենալով Դուրեանին տեսնել կաթողիկոս, դիմում են այդ տեսակ ինտրիգների, — մենք չը գիտենք։ Չենք ուզում երբեք հաւատալ, որ Դուրեան սրբազան մասն ունենայ այդ ինտրիգների մէջ, ինչպէս կան կասկած յայտնողներ։ Բայց հարկ ենք համարում զգուշացնել նրանց, որոնք կամենում են խափանել Իզմիրլեանի կաթողիկոսացումը, թէ, գործող Պօլոժենիայի համաձայն, եթէ որևէ պատճառով Իզմիրլեանի կանդիդատութիւնը հանվի, նախ քան կայսրին ներկայացնելը Դուրեան նոյնպէս չէ կարող հաստատվել կաթողիկոս, այլ ընտրութիւնը կը բեկանվի և կը նշանակվի նոր ընտրութիւն։

Իսկ այդ նշանակում է ամբողջ 2 տարի էլ թողնել Թափուր հայրապետական գահը և հայոց եկեղեցու կառավարութիւնը Ռուսաստանում թողնել Սուրէնեանի ու իր անխորհուրդ խորհրդականների՝ վանական Մեսրոպների և Բագրատների ձեռքում։

Հ. Առաքելեան

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Սիմբիրսկի քաղաքային Դումայի նիստն է։

Սա… ուշադրութիւն։

Տեսնենք ինչ պիտի ասի քաղաքային ձայնաւոր և զեմստվային աւագ բժիշկ Բօրօվսկին։

— Պարոններ,— սկսում է թուղթը կուլ տալով Բօրօվսկին,— անկարելի է այդչափ դիջող լինել դէպի չքաւորները, որոնց շնորհիւ շարունակ ապարիկներ են գոյանում։ Ես առաջարկում եմ «ցենզային սիստեմը» մեզանում էլ մտցնել։ Նրանք, որոնք հարուստ են, վճարելու ընդունակ, իհարկէ, կընդունվին հիւանդանոցում, իսկ չքաւորները իբրև անընդունակներ թող սպասեն նախախնամութեան տնօրինութեանը…

— Ի՞նչ, ինչ…— լսվում է այս ու այն կողմից։

Դահլիճում բարձրանում է աղմուկ։

Ոտքի է կանգնում ձայնաւոր Պօլուբկօվը։

— Եթէ մոռացել էք խիղճը, յիշեցէք, գոնէ, օրէնքը, որի համաձայն դուք պարտաւոր էք ընդունել բոլոր հիւանդներին առանց բաժանելու նրանց արտօնեալների և ոչ արտօնեալների, հարուստների ու չքաւորների։ Դուք բժիշկ էք և պարտաւոր էք իմանալ ու յիշել, որ այդպիսի վարմունքների համար ձեզ կը նստեցնեն մեղադրեալների նստարանների վրայ։

Ճառախօսի այդ խօսքերը ծածկվում են բուռն ու երկարատև ծափահարութիւններով։

Բօրօվսկին զգում է, որ շատ հեռուն գնաց իր ռեֆօրմատօրական առաջարկով, և փորձում է մեղմացնել տպաւորութիւնը։

Բայց ուշացել էր։

Արտօնեալների իդէօլօգիայի ջատագով, պեդանտութիւնը քարասրտութեան հասցնող բժիշկի համար, «Г. М.» լրագրի տուած վերոյիշեալ տեղեկութեանը նայելով, դահլիճը արդէն արտասանել էր իր դատավճիռը։

Եւ զարմանալի չի լինի, եթէ հասարակական կարծիքի առաջ, գոնէ, այդ ինտելիգենտ բժիշկը նստած մնայ մեղադրեալի նստարանի վրայ։

*

Դումայի ամբիոնից վերջին ժամանակներս երբեմնակի հնչող անպատկառ հայհոյանքները, վերջապէս, լուրջ մտահոգութիւն են պատճառում պարլամենտական ներկայացուցիչներին։

Պուրիշկևիչը եղակի նմուշ էր Դումայում։

Բայց ահա հանդէս եկաւ Պօլօվցեվը նրանից գերազանցելու։

Սակայն Պուրիշկևիչը ցանկանում է միակը լինել բարձր հաստատութեան պատերի մէջ։

Եւ պատկառելի տ. Ֆիլոսոֆովային ուղղած իր փողոցավայել նամակով կարողացաւ այդ առաջնութեան պատիւը ընդմիշտ պահել իր համար։ Ի հարկէ նա այդ արեց արհամարհելով վայելչութեան ու քաղաքավարութեան տարրական կանոնները հոգեկան հիւանդներին միայն յատուկ լկտիութեամբ։

Դէպքը ընդհանուր վրդովմունք է առաջացրել։

Բայց մի Պուրիշկևիչի համար, որը խուլիգանական կազմակերպութեան ոյժի վրայ յենվելով սովորել է ուրիշներին՝ մինչև իսկ մինիստրներին «դիրեկտիվներ» տալ, ինչ արժէք կարող է ունենալ հասարակական կարծիքը։

Պուրիշկևիչը Պուրիշկևիչ ծնվել է, Պուրիշկևիչ էլ կը մեռնի—ահա նրա հաւատամքը։

Այն՝ ինչ որ նա թոյլ տուեց Ֆիլոսոֆովայի նկատմամբ, մի քանի ամիս առաջ ուղղել էր կանանց ամբողջ կազմակերպութեանը և «Женскiй Вѣстникъ» թերթին, երբ վերջինս կանանց ընտրողական հարցի առիթով անկետի թերթիկներ էր ուղարկել Դումայի պատգամաւորներին։

Ստացված պատասխանների թւում բացառութիւն էր կազմում միայն պատգամաւոր Պուրիշկևիչի ցինիկ ոտանաւորը։

Սակայն այս անգամ Պուրիշկևիչի վարմունքը այնքան է փողոցային, որ ծայրայեղ վրդովմունք է առաջ բերել կանանց շրջանում։

Որպէս ապացոյց կարող է ծառայել այն արտասովոր քայլը, որ արել է Մարիոպոլում ապրող Էլվիրա Գելդերը մենամարտի հրաւիրելով Պուրիշկևիչին այդ դէպքի առիթով։

Գելդերը, ինչպէս «Баку» թերթն էր հաղորդել իր մօտակայ համարներից մէկում, առաջարկել է պատգամաւոր Գեգեչկօրիին իր սեկունդանտը լինել, թէև վերջինս պատասխանել է, որ ինքը սկզբունքով դէմ է մենամարտի, և խորհուրդ է տուել հրաւիրողին արհամարհել Պուրիշկևիչի վարմունքը։

Ինչ խօսք, որ այդ մենամարտի հրաւէրը առիթ կը տայ Պուրիշկևիչին նոր ցինիկութիւնների ու անպարկեշտութեան դիմել, որ միանգամայն սպասելի է նրանից։ Մեզ համար այստեղ կարևոր է արձանագրել միայն այն եղակի օրինակը, որ տալիս է կինը իր պատիւը պաշտպանելու գործում։

Եւ թւում է ինձ՝ ուրիշներին «դիրեկտիվներ» տուող Պուրիշկեվիչների համար որքան էլ մեծ պատիւ թւայ այդ հրաւէրը, նա այնուամենայնիւ մի անմոռանալի ապտակ է, որի նմանը ռուսական տարեգրութեան մէջ դեռևս չէ տեսնւած։

Աշխատակից

ԱԶԷՖԻ ԳՈՐԾԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ահա մի ամբողջ ամիս է, որ Ազէֆի գործը կամ «Ազէֆ-Լօպուխինի» կոչւած գործը զբաղեցնում է ոչ միայն ամբողջ Ռուսաստանի, այլ և Եւրոպայի հասարակական կարծիքը։ Ռուսական, եւրոպական, նոյնիսկ ամերիկական մամուլը օրերով, շաբաթներով ահագին յօդուածներ է նուիրում այդ չարաբաստիկ և իր սկանդալային կերպարանքով նմանը չունեցող գործին։ Ռուսաց Պետական Դումայում այդ մասին պէտք է հարցապնդումն լինէր չորեքշաբթի, ամսիս 11-ին, երեկոյեան նիստում։ Հաւանօրէն այդ հարցապնդումը շատ բան կը պարզէ, և մենք կիմանանք փոքր ի շատէ ստոյգ և մանրամասն տեղեկութիւն այդ հարցի մասին և մի որոշ գաղափար կը կազմենք նրա էութեան մասին, որովհետև տեղեկութիւնները այդ գործի մասին վերին աստիճանի բազմազան և հակասական են։

Ազէֆը եղել է սօցիալիստ-յեղափոխականների գլխաւոր լիդէրը և կենտրոնական վարչութեան ղեկավարը։ Նրան են վերագրւում այդ կուսակցութեան կողմից կատարւած մի քանի նշանաւոր տէրրորիստական ակտեր։ Եւ սակայն նա, Ազէֆը, եղել է միևնոյն ժամանակ և գաղտնի ոստիկանութեան ագենտ ու խուզարկու և նրա մատնութիւնների շնորհիւ շատ սօցիալիստ-յեղափոխականներ կալանաւորվել և մահվան պատժի են ենթարկվել։ Արդ, ինչ է եղել, ըստ էութեան, Ազէֆը. եղել է նա իսկապէս մատնիչ, դաւաճան, շանտաժիստ, թէ՞ եղել է յեղափոխական և գաղտնի ոստիկանի, խուզարկուի պաշտօնը ծառայեցրել է, իր կարծիքով, յեղափոխական նպատակի և շահերի համար։ Այս հարցն է զբաղեցնում շատերին։ Գալով Լօպուխինին, որ կայսրութեան ընդհանուր ոստիկանութեան պետն էր, նա կալանաւորվել է իբր թէ այն մեղադրանքով, որ նա է մերկացրել Ազէֆի՝ գաղտնի ոստիկանութեան և լրտեսութեան պատկանելու իրողութիւնը, ուրեմն մերկացրել է կառավարչական մի գաղտնիք։

Բայց Ազէֆի գործը ահագին հասարակական նշանակութիւն ունի այն տեսակէտից, որ նա բաց է անում մի սոսկալի խոց, որ մաշում, քայքայում է պետական կազմը. դա տէրրորի, լինի նա կառավարչական թէ յեղափոխական, հրէշաւոր վնասակարութիւնը, սնանկութիւնը և անբարոյականացուցիչ, կազմալուծող, վայրենացնող ազդեցութիւնն է։

Առաջ բերենք մի քանի կարծիքներ. «Моск. Еженед.» հանդէսի մէջ պ. Ստրուվէն մերկացնում է այն «անբնական ռէժիմի» հիմքը, որի պայծառ լուսաբանութիւնն է Ազէֆի գործը։ Հեղինակը ամենից առաջ բացատրում է «յեղափոխական տէրրորի ընդհանուր և շատ խոր հոգեբանական աղբիւրը». այդ աղբիւրը թաղնւած է հասարակական կարծիքի անզօրութեան մէջ, որ չէ գտնում կանոնաւոր ճանապարհ իր արտայայտութեան համար։

Եւ նոյնպիսի հոգեբանական անխուսափելիութեամբ, որով տէրրորը ծնվում է հասարակական կարծիքի անզօրութիւնից, տէրրորից էլ ծնվում է պրովօկացիան։ Յեղափոխական տէրրորը ձգտում է սարսափեցնելով իշխանութիւնը լրացնել հասարակական կարծիքի անաչարութիւնը։ Պրովօկացիան ձգտում է սաստկացնել այդ սարսափը, հասցնել նրան ամենակուլ, ամբողջ պետական գործունէութիւնն որոշող զգացմունքի, բայց ուղղել նրան դէպի ուրիշ կողմն։ Սարսափահար անելով իշխանութիւնը, նա ձգտում է վերջնականապէս առանձնացնել նրան հասարակութիւնից։

Ապա գումարելով Ազէֆի գործունէութիւնը, պ. Ստրուվէն մի կողմից նկատում է, որ «Ազէֆի գործունէութեան» նիւթական հաշւեկշիռը աւելի տխրալի է «կառավարութեան» համար, քան «յեղափոխութեան» համար. միւս կողմից՝ «Ազէֆի գործի» պատմական նշանակութիւնը տեսնում է այն բանի մէջ, որ նա բարոյապէս մեռցնում է յեղափոխական տէրրորի սիստեմը։

Բարոյական միութեան մտքով,—ասում է նա,—սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը ազէֆականութիւնից յետոյ այլևս գոյութիւն չունի։ Դա—պէտք է ասել առանց տատանվելու—ահագին բարոյական շահեցումն է ռուսական քաղաքական կեանքի առողջացման մտքով, բայց տէրրորի բուն հիմքը, իբրև քաղաքական չարիքի, սիստեմի այդ սնանկութեամբ ամենևին չէ խախտւում։

Պարզ է, որ Ազէֆի գործը եթէ մի կողմից մերկացնում է պետական մեքենան մաշող, կրծող խոցը, միւս կողմից մերկացնում է այն չարիքները, զեղծումները, որոնք գործւում են յանուն յեղափոխութեան։ Ազէֆականութիւնը սաստիկ անդարմանելի հարւած հասցրեց սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան բարոյական համբաւին և հմայքին։ Նա, այդ կուսակցութիւնը, բարոյապէս մեռած պէտք է համարել և դժուար թէ կարողանայ շուտով վերականգնել, այնքան զօրեղ է նրա կրած հարւածը Ազէֆի մատնութեան և դաւաճանութեան պատճառով։

ԱԶԷՖԻ ԳՈՐԾԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 11 փետրվարի

Պետական Դումայի 50-րդ նիստը բացվում է երեկոյեան ժամը 8 և 35 րոպէին, Խոմեակովի նախագահութեամբ։

Հանդիսականների և մամուլի ներկայացուցիչների բոլոր օթեակները ամբողջովին լցված են։ Լիքն են նոյնպէս սենատորների ու Պետական Խորհրդի անդամների օթեակները։ Մինիստրների օթեակում ներկայ են ֆինանսների, արդարադատութեան, ճանապարհների հաղորդակցութեան, առևտրի, ծովային, ժողովրդական լուսաւորութեան, երկրագործութեան մինիստրները, պետական քարտուղարը, զինւորական մինիստրի օգնականը։ Կարդացվում են ընթացիկ խնդիրները։

Զեկուցանող կոմս Բոբրինսկի 2-րդը սահմանափակում է իր ճառը հաղորդելով հարցապնդումների մասնաժողովի պատրաստած զեկուցման գործնական-էական մասը, որով մերժվում է սօց.-դեմօկրատների յարուցած հարցապնդումը և առաջարկում ընդունել կադետների մտցրած հարցապնդումը։

Պօկրովսկի 2-րդը պաշտպանելով սօց.-դեմօկրատների առաջադրած հարցապնդումը՝ մատնանշում է, որ նրանց նպատակը չէ բազմակողմանի կերպով լուսաբանել Ազէֆի գործունէութեան մութ կողմերը, այլ պարզել՝ թէ ինչպիսի հողի վրա կարողացաւ առաջ գալ այդ զարմանալի միջադէպը և այդ միջադէպը պատահական երևոյթ է արդեօք, թէ՞ նա որոշ տեղ է բռնում մեր ներքին կառավարութեան գործում. ինչպիսի՞ յարաբերութիւններ պէտք է ունենայ ոստիկանական դեպարտամենտի տեղեկատու ծառայութեան գործակալ Ազէֆը վերոյիշեալ դեպարտամենտի ու կառավարչական ուրիշ կենտրոնական հաստատութիւնների հետ (մինիստրների օթեակում բռնում է իր տեղը մինիստրների խորհրդի նախագահը)։

Պօկրովսկին շարունակում է։ Կարդալով խուզարկու բաժանմունքների կառավարիչների համար 1902 թւին մշակված կանոնադրութիւնները և հետևելով Ազէֆի գործունէութեան առիթով լրագրական էջերում լոյս տեսած այն տեղեկութիւններին, որոնք հաղորդել է սօցիալիստ-յեղափոխականների պարիզեան խմբակը, ճառախօսը գտնում է, որ 1902 թւականից սկսած մինչև 1908 թւականի վերջը, Ազէֆը Րաչկօվսկու և այլ չինօվնիկների միջոցով անմիջական յարաբերութիւն ունէր ոստիկանական դեպարտամենտի հետ, նոյնիսկ անձամբ յայտնի էր դեպարտամենտի դիրեկտօրին և ներքին գործերի մինիստրի օգնականին։ «Իսկ ինչ էր ներկայացնում Ազէֆը,—հարցնում է ճառախօսը,—սօցիալիստ-յեղափոխականների համար։ Նա անդամ էր ոչ միայն այդ կուսակցութեան, այլ և նրա ակտիվ ռազմական կազմակերպութեան։ Մենք յայտնում ենք, որ Ազէֆը անմիջական մասնակցութիւն ունէր տէրրօրիստական ակտեր կազմակերպելու գործում։ Ի հարկէ, թէ Դուման և թէ հասարակութիւնը սպասում են մեզնից անհերքելի փաստաթղթեր, բայց, ի հարկէ, արքունական կնիքներով վաւերացված պաշտօնական փաստաթղթեր այդպիսի գործերի վերաբերեալ ձեռք բերել չէ կարելի (ձայներ՝ «Ը՜հ՜». նշանակում է ոչինչ չը կայ»)։ Մենք քաղում ենք մեր տեղեկութիւնները սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան հաղորդած տեղեկութիւններից» (ձայներ աջակողմից՝ «Վատ աղբիւր է»)։ Զեկուցանողը ձգտում է արատաւորել այդ աղբիւրը. նա մատնանշում է, որ իբր չէ կարելի հաւատ ընծայել սօցիալիստ-յեղափոխականների փաստաթղթերին, որովհետև նրանցում սխալ կերպով է յիշված Թագաւորի սպանութիւնը նախապատրաստելու ժամանակաթիւը, «սակայն կոմս Բոբրինսկու դիտաւորութիւնները ի զուր են. մենք պնդում ենք, որ սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը ոչ թէ մի անգամ, այլ երկու անգամ է մահափորձ պատրաստել Թագաւորի դէմ, այդ պատճառով էլ այն ժամանակաթիւը, որ յիշված է սօցիալիստ-յեղափոխականների փաստաթղթերում, ուղիղ է (ձայներ աջակողմից՝ «Հիանալի է, այդ դուք նախնական աղբիւրներից էք քաղում»)։ Երրորդ Դումայի ժամանակ սօցիալիստ-յեղափոխականները առիթ չունէին հրաժարվելու տէրրօրից»։ Անցնելով կրկին Ազէֆի գործունէութեան առանձին փաստերի քննութեան, ճառախօսը պնդում է, որ Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի կեանքի դէմ պատրաստվող մահափորձի մասին իմանում էր ոչ միայն Մօսկվայի պահնորդական բաժանմունքը, այլև ոստիկանութեան դեպարտամենտը, որովհետև մահափորձի օրը Պետերբուրգից, այլ ոչ Մօսկվայից, ոստիկանական դեպարտամենտն է ուղարկում հեռագիրներ Ռուսաստանի բոլոր կողմերը անմիջապէս կալանաւորելու Սաւինկօվին, իսկ նրա ծնողների վրա, որոնք այն ժամանակ ապրում էին Վարշավայում, հրամայում է ամենախիստ հսկողութիւն նշանակել։ «Պահնորդական բաժանմունքը գիտէր, թէ ովքեր էին Լաունիցի սպանութեան գործում մասնակցողները, կամենում էր կալանաւորել նրանց՝ յանցանքը կատարելու տեղում, բայց յեղափոխականները պրովօկատօրներից ծածուկ փոխեցին յարձակման ծրագիրը և Լաունիցը սպանվեց։ Ընդունենք նոյն իսկ, որ Ազէֆը միշտ կանոնաւոր կերպով տեղեկացնում էր պատրաստվող մահափորձերի մասին։ Սակայն մի՞թէ կառավարչական գործակալները կարող են ոչ միայն իմանալ, այլև մասնակցել արիւնահեղ գործերի ծրագիրներ կազմելում. կարող են աջակցել այդ գործերի իրագործմանը և զեկուցանել իր ժամանակին կամ ժամանակից ուշ մահափորձերի մասին կամ չը նախազգուշացնել։ Իսկապէս Ազէֆը, իբրև մի չափազանց մեծ գաղտնի կազմակերպութեան անդամ, գործելով երկու ֆրօնտի վրա, պարտաւոր էր ոչ թէ բաւականանալ միայն դիտողի դերով, այլ պարտաւոր էր, վստահութիւն վայելելու համար, նաև եռանդոտ ակտիվ գործունէութիւն ցոյց տալ, և մենք, Ազէֆի գործունէութեան ներկայումս պարզված դիրքի հիման վրա, պնդում ենք, որ Ազէֆը ոստիկանական դեպարտամենտի գիտութեամբ մասնակցում էր և ընկերակցում էր սօց.-յեղափոխականների տէրրօրիստական կուսակցութեանը»։

Մանրամասն թւելով, թէ ոստիկանութեան դեպարտամենտի պաշտօնեաներից ո՞րը, սկսած 60-ական թւականներից, պարապել է, լրագրական տեղեկութիւնների համաձայն, պրովօկացիայով, Պօկրովսկին գալիս է այն եզրակացութեան, որ «պրովօկացիան ռուսաց կառավարութեան սիստեմ է դարձել, որ պրովօկացիան հանդիսանում է մեռնող միապետութեան ռէժիմի անկապտելի մասը (աղմուկ, նախագահի զանգը,) և պ. Ստոլիպինը, որ սանկցիա է տալիս պրովօկացիաների սիստեմին, պէտք է հաշւի առնէ նաև նրա հնարաւոր հետևանքները։ Եթէ Ստոլիպինը իրան Ազէֆի թիկունքի ետևը ապահով է զգում, ուրեմն նա իրան ապահով է զգում միայն մինչև այն ժամանակ և այն չափով, ինչ չափով որ նա հաւատ է ընծայում մատնիչին (ծիծաղ աջակողմում, նախագահը զանգահարում է)։

«Կառավարութիւնը, ի հարկէ, չի պատասխանի մեր հարցապնդումին։ Նա չի կամենայ, չէ կարող պատասխանել, բայց ոչ մի պերճախօս փաստով նա չէ կարող այդ տեսակէտից բաւականութիւն տալ երկրի կարծիքին։ Պրովօկացիայից հրաժարվելու համար կառավարութիւնը պէտք է համակվի օրինականութեան, մարդասիրութեան, արդարադատութեան և ողորմածութեան սկզբունքներով։ Դրա համար կառավարութիւնը պէտք է յենվի ժողովրդի վստահութեան վրա, և ոչ թէ սուինների և ոստիկանական մտրակների ույժի վրա։ Բայց նա չէ կարող հրաժարվել սխական սովորութիւններից և պրովօկատօրական գործունէութիւնից, որովհետև նա աննիբալական արիւնռուշտ կառավարութիւն է (ծիծաղ կենտրոնում և աջակողմում)։ Որպէսզի այդ բոլորից նա հրաժարվի՝ մի ճանապարհ կայ միայն—ոչնչանալ...» (ծափահարութիւն ձախակողմում, սուլոց աջակողմում)։

Առաջարկվում է հռետորների ցուցակը փակել։ Գրվել են 54 հռետորներ։

Քուէարկութեամբ ցուցակագրութիւնը դադարեցվում է։

Զեկուցանող կոմս Բոբրինսկի 2-րդը յայտարարում է, որ երբէք նա իր վրա պարտք չէր վերցնի արատաւորել այն փաստաթղթերը, որոնք բղխում են սօցիալ-յեղափոխականների կուսակցութիւնից, և ասել, որ նրանից ամենից շատ արատաւորեց Պօկրովսկի 2-րդը։ «Նա այն ասաց, ինչ որ մենք չը գիտենք, որ սօցիալ-յեղափոխականները կրկնակի կայսերասպանութիւն են պատրաստել։ Կարելի՞ է, միթէ, և արժանապատուութի՞ւն է, արդեօք, Դումայում քննել այն փաստաթղթերը, որոնք բղխում են կայսերասպաններից։ Ո՞չ ապաքէն պարզ չէ, որ այժմ, խրվելով ցեխի մէջ, թաթախվելով նրանով, նրանք աշխատում են հէնց այդ ցեխն էլ շպրտել կառավարութեան վրա ..»։

Շիրկովը անվայել է գտնում Դումայի քննութիւնները հիմնել սօցիալ-յեղափոխականների փաստերի վրա, իսկ որովհետև ուրիշ փաստեր չը կան, որոնք հարցապնդումը հաստատէին, ուրեմն պէտք է մերժել հարցապնդումը։

Պետրով 3-րդ, Վօլկօվ, Մոտովիլով, Զախարէվ, Սիրոտանով, Լուկաշին, Աջէմեան, Կուրոպատով, Կուզնեցովը բացակայ են (ծիծաղ, աղմուկ)։

Նախագահ. — Դումայի անդամ Ռօդիչև։

Պուրիշկեվիչը տեղից.—Ռօդիչևը դահլիճումն է։

Ռօդիչևը, փոխանակ հռետորական ամբիոնը գնալու, շտապով դիմում է դէպի ելքը (աջակողմից աղմուկ, ծիծաղ, բուռն ծափահարութիւններ)։

Ձախակողմեան աթոռները համարեա դատարկ են։

Կրուպենսկին առաջարկում է վիճաբանութիւնները դադարեցնել։

Նախ.—Այդ առաջարկը քուէարկութեան եմ դնում (աղմուկ, ծիծաղ. բոլոր դռների կողմից ձախակողմեանները շտապում են իրանց տեղերը)։ Յայտարարում եմ կէս ժամով ընդմիջում։ Գուցէ Դուման հասկանայ, թէ ինչպէս պէտք է պահէ իրան։ Այժմ ամենքը դուրս են գնում դեմօնստրատիվ կերպով, ուստի ես կէս ժամով եմ ընդմիջում անում։ («Հ. Գ.»)

(Կը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մերվ, 25 յունվարի

Ամսիս 15-ին տեղիս ծխական ուսումնարանի ուսուցչուհին երեք ամսվայ բաւարարութիւնն ստանալով դադարեց իր միօրեայ դասատուն։ Եթէ պ. պ. հոգաբարձուները հնարաւորութիւն ունեցան մի օրվայ ընթացքում ժողովել տուրքերը և բաւարարութիւն տալ ուսուցիչներին, ինչո՞ւ երեք ամբողջ ամիսներ ձգձգում էր և գործը հասցնում այդպիսի ոչ ցանկալի հետևանքի…

Mentor

Երևան, 1 փետրվարի

Անցեալ յունվար ամսի 26-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Աստաֆեան փողոցի կենտրոնում հարիւր անցուդարձ անողների ներկայութեամբ չարագործների գնդակին զոհ գնաց աշտարակեցի Կարապետ Ազատեանը երիտասարդ հասակում։ Չարագործներին հետապնդող չեղաւ. նրանք ազատ կերպով անյայտացան, չը նայելով որ մի քանի քայլ հեռաւորութեան վրա կանգնած էր քաղաքապահը։ Հանգուցեալի մարմինը տեղափոխվեց Աշտարակ և 29-ին բազմաթիւ յուղարկաւորողների ներկայութեամբ յանձնվեց հողին։ Հանգուցեալին պատուելու և իր վերջին յարգանքը տալու համար շրջակայ գիւղերից եկել էր մեծ բազմութիւն։ Յուղարկաւորութեան հանդէսին ներկայ էր Աշտարակի ծխական եկեղեցական դպրոցի ուսուցչական կազմը, պետական դպրոցների ուսուցչական կազմի և դպրոցների աշակերտների հետ։ Հանգուցեալը հոգաբարձու էր ծխական դպրոցի և հիմնադիր՝ քաղաքային դպրոցի։ Եկեղեցում հանգուցեալի վրա խօսեց երիտասարդ Կարապետ Աստուծեանը, յիշեցնելով նրա՝ Աշտարակի հասարակութեանը արած բարիքները և նրա օգտակար լինելը. գերեզման իջեցնելիս խօսեց Մելքոն Մելքոնեանը, նկարագրելով թէ հանգուցեալը որպիսի եռանդով աշխատեց Աշտարակում քաղաքային դպրոց հիմնելուն և դրա այդ աշխատութիւնը որպիսի բարի և օգտակար պտուղ է տալիս ու տալու է։ Նա շեշտեց, որ չարագործների բռնագործութիւնը որքան զրկեց իրան՝ երիտասարդ Ազատեանցին կեանքից, առաւել ևս դրանով վնասեց Աշտարակի հասարակութեանը՝ խլելով նրանից մի անկեղծ գործիչի և հասարակական շահերի պաշտպան անձնաւորութեան։ Աշտարակի ամբողջ հասարակութիւնը սգում է Ազատեանցի վաղաժամ մահը։ Կարապետ Ազատեանցը իր հէնց 28 տարեկան հասակից մտաւ հասարակական գործերի մէջ և ամեն անգամ ցոյց տուեց իր ընդունակութիւնը և հասարակութեան շահերի անկեղծ պաշտպան լինելը։ Նա գիւղական հասարակութեան տանուտէր ընտրվեց ու իրան շրջապատեց որոշ երիտասարդ ույժերով, որոնց նպատակն էր հասարակութեան խեղճ մասի արդար դատ պաշտպանելը։ Հէնց առաջին անգամ իր հասարակութեան շահերի սրտացաւ երևալը արտայայտեց ոմանց ուժեղների հասարակական գետնից սեփականացրած լինելուց հեռացնելը, որ ի հարկէ բաւական յուզեց տուղերին, սակայն նա հաստատակամութեամբ առաջ տարաւ իր ծրագրածը, և այդ գետնից ստացած արդիւնքը յատկացրեց ծխական դպրոցին։ Առաջին քայլը արդէն գրգռեց սագերին, բայց նա չը բաւականացաւ դրանով, այլ այն ամեն հասարակական հողերը, որոնք մասնաւոր մարդկանց սեփականութիւն էին դարձել, նա ույժով ետ խլեց և յատկացրեց դպրոցին. այդ յափշտակված հողերն են, երերի տակ, Աշտարակի և Օշականի սահմանների մէջ քարէ կամուրջ և քարփու հանդ, որոնք ծխական դպրոցի միջոցները հեշտացնելու մի անսպառ աղբիւր են։

Իր տանուտէրութեան ժամանակ Աշտարակի բաղերի միջով դժուար անցանելի ճանապարհները լայնացրեց ընդարձակ կերպով և երթևեկութիւնը հեշտացրեց, ճանապարհների հեշտացնելու համար բաւական արժողութեամբ գետին իր սեփական այգուց զիջանելով։

Հեշտացրեց Պատուելակոնու քարհանքի ճանապարհը, որտեղից հեշտութեամբ աշտարակցին այժմ հոգում է իր շինութեան քարը։ Հանգուցեալի ջանքով և աշխատութեամբ քաղաքային դպրոցի իրաւունք վայելեց Աշտարակը, ուր հարիւրաւոր աղքատ երեխաներ են սովորում։ Հանգուցեալի աշխատութեամբ շինվեց հասարակական դվոր, որը տարեկան 1000 րուբլի արդիւնք է տալիս դպրոցին։ Հանգուցեալը նախկին պրիստաւ Գոգօբերիձէի օգնութեամբ գիւղական բանկի հիմքը դրեց, որի տուած օգուտը աչքառու է և հրապարակի վրա. բանկը բացի աղքատ դասակարգին օգտաբեր լինելուց, իր արդիւնքից մասն է հանում և Աշտարակի ծխական դպրոցին և ուրիշներին ևս. հանգուցեալը բանկի հիմնվելու օրից ցայսօր խորհրդի անդամ էր և իր աչալրջութեամբ վայելում էր հասարակութեան համակրանքը, որին ապացոյց նոր վերընտրվելն է։ Երիտասարդ Ազատեանցը իր վստահ և համարձակ գործունէութեամբ և անկաշառ պաշտօնավարութեամբ իր դէմ գրգռեց մութ ույժեր. նա հալածում էր հասարակութեան ցեցերին և ժողովրդի անունը շահագործողներին։ Ինքն էլ շատ լաւ հասկանում էր իր դէմ լարված դաւադրանքները, սակայն հպարտութեամբ արհամարհում էր. «Ես ներում եմ նրանց, թողնում եմ անուշադիր և երբէք չեմ կարող մազաչափ շեղվել իմ ուղղութիւնից, թէկուզ ինչ կամենան անեն։ Ես պատկանում եմ հասարակութեանը և նրա շահերը պաշտպանելու պարտական եմ։ Ես արհամարհում եմ գնդակը և մահը, արհամարհում եմ և ինձ հետևող սրիկաներին, որոնք միայն իրանց փորի համար են մտածում։ Նրանց գնդակը չէ կարող երկիւղ ազդել ինձ և հեռացնել հասարակութեան շահերը պաշտպանելուց»։ Այսպիսի մի հասարակական գործող զոհ գնաց չարագործների դաւադրութեան։ Հանգուցեալը բաւական կարողութեան տէր անձն էր. նրա այրին իր ամուսնու յիշատակին մի հարիւր րուբլի նուիրում է ծխական դպրոցին, որի տոկոսով պիտի սովորեն աղքատ երեխաներ երկու սեռից. յիսուն րուբլի ևս քաղաքային դպրոցի գրադարանին։ Հանգիստ ոսկորներիդ, անկեղծ, անկաշառ, ժողովրդական պարզասիրտ գործող. թող քո յիշատակը օրհնված լինի. Աշտարակի հասարակութիւնը չի մոռանայ քեզ, քանի գոյութիւն ունեն գիւղական բանկը, ծխական և քաղաքային դպրոցները, որոնց գոյութեան հաստատութեան նուիրված էիր բոլոր ույժով։

Աշտարակեցի

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Փետրվարի 1-ին կովկասեան զինւորական-նահանգական դատարանում քննվեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան նախկին ծառայող Լ. Ա. Մամուլովի գործը, որ մեղադրվում էր քրէական պատժագրքի 102-րդ յօդուածով։

Մեղադրեալին պաշտպանում էր երդ. հաւ. Ի. Մ. Դօլուխանեանը։

Այս գործի վերաբերեալ հարցաքննվեցին իբրև վկաներ քաղաքագլխի պաշտօնակատար պ. Ա. Խատիսեան, դումայի ձայնաւոր Ս. Զրէյլէվ և վարչութեան ծառայող Վ. Խախանով և այլք։

Դատարանը Մամուլովին արդար ճանաչեց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վաղը Վանքի աւագ եկեղեցում, պատարագից յետոյ, կը կատարվի հոգեհանգիստ Ներսիսեան դպրոցի հիմնադիր Ներսէս V կաթողիկոսի յիշատակին։

◆ Թիֆլիսի քաղաքային առևտրական մարմնի գործակալներին խստագոյն կարգադրված է ամեն միջոց ձեռք առնել, որպէսզի մսագործները միսը չը վաճառեն սովորական գներից բարձր։ Առաջարկված է ամեն մի խախտման դէպքում անմիջապէս արձանագրութիւն կազմել։

◆ Մուշտայիդ այգին երեք տարով կապալով տրված է կրկին Գօրգիջանովին տարին 2000 րուբլի վճարով։

◆ Անցեալ տարվայ ընթացքում անդրկովկասեան երկաթուղիների շահագործութիւնից ստացվել է ընդամենը 3,418,300 րուբլի. 1907 թ. ստացվել էր 5,152,000 րուբլի։ Եկամուտի պակասելը բացատրվում է նրանով, որ անցեալ տարի շատ քիչ է ուղարկված մարգանեց և նաւթ արտասահման։

◆ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, աշնանացանի դրութիւնը Գանձակի նահանգի սահմաններում ներկայանում է այսպէս։ Գանձակ քաղաքում աշնանացանը լաւ է. գետինը ծածկվեց ձիւնով կարճ ժամանակով, իսկ ցանքսերը համարեա բոլոր ժամանակ բաց են։ Գաւառում ցանքսերը դաշտավայրերում բաւարար են, իսկ լեռնային մասերում, սառնամանիքների և ձիւնի պատճառով, անբաւարար է։ Արէշի գաւառում աշնանացանը բաւարար է, Նուխու գաւառում ցանքսերը այնքան էլ լաւ չէին և միայն ձիւնի տակ։ Ջիվանշիրի գաւառում ցանքսերը շատ լաւ են։ Ղազախում ցանքսերը միայն ձիւնի տակ բաւարար դրութեամբ։ Շուշու գաւառում, շնորհիւ աշնան անձրևների, լաւ էին և այնպէս էլ միացին ձիւնի տակ բաւարար դրութեամբ։ Կարեագինի գաւառում նոյնպէս։ Ներկայումս ձիւնը հալվում է և ցանքսերը գտնվում են բաց դրութեան մէջ։

◆ Վրաց ազնուականութեան թատրոնի շինութիւնը, հակառակ նախահաշւում որոշած 80 հազար րուբլու, նստեց ընդամենը 328,000 րուբլի։ Ներկայումս ազնուականների պատգամաւորական ժողովը զբաղված է այն խնդրով, թէ որտեղից ճարել ազատ գումարներ այդ աւելի ծախքը ծածկելու համար։ Թատրոնը կառուցանող ինժեներ հայազգի Տէր-Սարգսեանը իբրև վարձատրութիւն ստացաւ 18,000 րուբլի։

◆ Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր, ուրբաթ, Թիֆլիսի Արքունական թատրոնում, երեկոյեան ժամը 8-ին, տեղի է ունենալու Ալ. Լիսօվսկու 2-րդ դասախօսութիւնը Գօգօլի մասին։ Դասախօսութեան ծրագիրն է. Մասն 1-ին—մալօրուսական ազգային տիպը, համեմատած վելիկօռուսականի հետ. Գօգօլը իբրև մալօրուսական տիպի ներկայացուցիչ: Մասն 2-րդ—դրական և բացասական տիպերը Գոգոլի «Тарасъ Бульба», «Мертвія Души», «Переписка съ друзьями» գրուածքներում: Մասն 3-րդ—բացասական մասը ազգային գաղափարի հետ:

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Կովկաս. դպրոցների շրջան. հոգաբարձուի թոյլտուութեամբ փետրվարի 15-ին և մարտի 3-ին և 23-ին ներկայ 1909 թ. Յ. Զ. Արաբատեանը, իր նորահնար թուաբանական մեքենայի վրա պարապելու է ս. Գէորգ ծխական դպրոցի 1-ին բաժ. աշակերտների հետ, 1-ին արական գիմնազիայի շինութեան մէջ: Այդ դէմոնստրացիայի իսկական նպատակը կը լինի՝ 1) թէ որչափ այդ գործիքը պարզ, հեշտ և զօրեղ կերպով արտայայտում է տասնորդական սիստեմը, 2) որքան այդ գործիքը հեշտացնում է և մատչելի է դարձնում թուաբանութեան դասաւանդութիւնը և 3) որքան ուղեղը իր տիրապետող ոյժի գիտակցութեամբ, գիտակցօրէն այդ գործիքի միջոցով գրկում է թուաբանութեան գիտելիքը առանց մի որևէ ճնշման: Այդ գործիքի միջոցով մի ժամվայ ընթացքում կանցնվի՝ փետրվարի 15-ին բանաւոր և գրաւոր թուարկութիւն 10-ից մինչև 999, մարտի 3-ին գումարումն և հանումն բազմանիշ թւերի, իսկ մարտի 23-ին բազմապատկումն և բաժանումն բազմանիշ միանշան թւերի վրա: Իւրաքանչիւր դասաւանդութեանը կը յաջորդի վերաստուգումն անցածների: Դասատուն հրաւիրում է իր դէմոնստրացիային ներկայ գտնվելու ուսումնարանական մասի կառավարիչներին, մաթեմատիկոսներին, մաթեմատիքայի դասաւանդողներին և մանկավարժներին: Առանձին հրաւէր չէ լինելու: Ամեն դասաւանդութեան սկիզբը լինելու է առաւօտեան ճիշդ ժամը 11-ին»:

◆ Կիրակի, փետրվարի 15-ին, Պուշկինեան գրադարանի շինութեան մէջ ռուսերէն լեզուով տեղի կունենան երկու դասախօսութիւններ. 1) Է. Ֆէդօրովը—«Օրգանիզմի կռիւը շրջապատի հետ», 2) Ր. Սիվկովը—«Աբրահամ Լինկոլ և Ամերիկայի ճորտութեան ոչնչացումը»: Սկիզբն է առ. ժամը 10 և կէսին: Մուտքը 10 և 5 կոպէկ:

◆ Թիֆլիսում կազմակերպվել է նոր ընկերութիւն «Հրէայ երեխաների խնամատար ընկերութիւն» անունով. կանոնադրութիւնը արդէն հաստատված է պատշաճաւոր իշխանութեան կողմից:

◆ Մուրղաբի արքունական կալուածքից բերել է տրված մի վագոն ամերիկական տեսակի բամբակի սերմ Երևանի նահանգի Շարուր-Դարալագեազի գաւառի համար:

◆ Թիֆլիսի քաղաքային արխիտեկտօրը տեղեկացրել է, որ Նաւթլուղում երևան են հանել եզիդների գերեզմանատուն: Այդ չը թոյլատրված գերեզմանատանը արդէն թաղված են մօտ 20 ննջեցեալներ:

◆ Թիֆլիսի բուսաբանական այգուն կից այգեգործ բանւորների դպրոցը կը բացվի առաջիկայ մարտի 1-ից:

◆ Սօլօլակի տունէլը լայնացնելու աշխատանքով ներկայումս զբաղված են մօտ 40 բանւորներ: Աշխատանքները կատարվեն հաւանօրէն մայիսի կէսերին:

◆ Սօղնատսկի բազարում քաղաքային բժիշկները երևան են հանել եղջերաւոր անասունների գաղտնի սաևատուր: Մեղաւորները պատասխանատուութեան են ենթարկված:

◆ Երկրագործութեան գլխաւոր վարչութեան Կովկասի լիազօրին ենթարկվելու են ոչ միայն այն բոլոր հաստատութիւնները, որոնք գտնվում էին նախկին լիազօրի իշխանութեան ներքոյ, այլև գաղթականական բաժինը:

◆ Ռօբակիձէն մեծ պասին կարդալու է երկու դասախօսութիւններ վրացերէն լեզուով, մինը Հէնրիխ Իբսէնի, միւսը Վաժա Պշավելու մասին:

◆ Եւլախ-Ուջարի երկաթուղագիծ անցկացնելու հարցը ներկայումս քննվում է ճանապարհների հաղորդակցութեան ինժեներների խորհրդի մէջ:

◆ Սուխումի գիւղատնտեսական ընկերութեանը կից բացվում է գիւղատնտեսական գործիքների պահեստ, որի համար երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը յատկացրել է 3000 րուբլի:

◆ Կովկասեան հողաչափ-բարեկարգիչ մասնաժողովը մարտի սկզբին մեկնելու է Լէնքօրանի գաւառը:

◆ Անցեալ տարիների նման փետրվարի 21-ին, վրաց ազնուականութեան թատրոնում, վրաց գրասիրաց ընկերութեան օգտին, տեղի կունենայ շքեղ երեկոյթ:

◆ 1908 թւի երկրորդ կիսամեակում Թիֆլիսում եղել են ընդամենը 618 վարակիչ հիւանդութեան դէպքեր, որոնցից 228-ը քութէշ, 204-ը՝ խօլերա, 61-ը՝ բգայաւ, 48-ը՝ տիֆ, 20-ը կարմրուկ եայլն:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Փետրվարի 2-ին Ն. Ա. Խօմեակօվը այցելել է պրեմիէր Պ. Ա. Ստօլիպինին և երկարատև խօսակցութիւն է ունեցել իրերի դրութեան և Պետական Դումայի աշխատանքների մասին:

Կառավարութիւնը Ազէֆի մասին արված հարցապնդումը ընդունելուց յետոյ անմիջապէս կը տայ փաստացի լրիւ բացատրութիւններ:

Ն. Ա. Խօմեակօվը պրեմիէրին յայտնել է իր հայեացքը, որ ներկայ սեսսիայում քննութեան նիւթ դարձնել տեղական դատարանի բարենորոգութեան վերաբերեալ օրինագիծը դժուար կը լինի ժամանակի սղութեան պատճառով, իսկ բաժանել նրան երկու մասի և ապա մաս-մաս քննել—այդ էլ գտնում է անյարմար:

Պրեմիէրը համաձայնվել է Խօմեակօվի կարծիքի հետ և խորհուրդ է տուել ներկայ սեսսիայում քննութեան ենթարկել պաշտօնական անձանց պատասխանատուութեան ենթարկելու մասին մշակված նոր կարճատև օրինագիծը:

Բացառիկ դրութիւնների առիթով Պ. Ա. Ստոլիպինը հնարաւոր է համարել հետզհետէ թուլացնել նրանց:

ՄԱՄՈՒԼ

Բօլգարիայում հրատարակվող «Ռազմիկ» թերթը, որի փողոցային յատկութիւնների մասին յաճախ առիթ ենք ունեցել գրելու, իր վերջին համարներից մէկում մեղադրում է «Մշակին», որ սա իբր թէ Թիֆլիսի «Գործ» թերթը անուանել է դաշնակցական: Արդ, «Մշակի» մէջ այդպիսի խօսք «Գործ» թերթի մասին չէ գրվել: Դուրս է գալիս, որ այդ խօսքը գրել է Կ. Պօլսի «Բիւզանդիոն» թերթը, և «Ռազմիկը» հայհոյելով նրան՝ հարկ է համարել հայհոյել և «Մշակին», որը, ինչպէս ասացինք, այդ խօսքը չէ գործածել: Այժմ «Բիւզանդիոն» թերթը ապացուցանում է, որ «Գործ» թերթին «դաշնակցական» համարող եղել է առաջ հէնց ինքը «Ռազմիկը», ուստի և «Բիւզանդիոն» իրաւացի կերպով նկատում է.

«Ռազմիկ» նեղացեր է «Բիւզանդիոնին»՝ Տփղիսի «Գործը» «դաշնակցական օրգան» անուանելուն համար: Իբր թէ այս կերպով «Գործին» վրայ կը դարձնենք եղեր ռուս կառավարութեան ուշադրութիւնը, որ դաշնակցական կը փնտռէ եղեր հալածելու համար: Արդ «Գործ» դաշնակցական է կամ ոչ: Եթէ է՝ ռուս կառավարութիւնը մեզմէ, արտասահմանի թերթէ մը չէ որ պիտի իմանայ: Իսկ եթէ չէ, արտասահմանի թերթի մը մէջ «դաշնակցական» ըսուելովը չէ որ «Գործ» ռուս կառավարութեան առջև պատասխանատու պիտի բռնուի: Եթէ գիտնայինք, որ «Գործ» ինք ժխտեր է իր դաշնակցական ըլլալը, անշուշտ այնպիսի մակդիր մը չէինք տար իրեն: Բայց քանի որ «դաշնակցական օրգան» «Ռազմիկ» այսքան հոգածու և այսքան նրբանկատ է պաշտպանելու համար «Գործը», ինչ խելքով իր 4-րդ երեսին մէջ «Գործը» շարունակ կը դնէ դաշնակցական հաստատութեանց ու հրատարակութեանց շարքին մէջ, «Արծիւ» դաշնակցական գրատան, դաշնակցական «Ապտակ» շաբաթաթերթին և Ամերիկայի դաշնակցական օրգան «Հայրենիքին» հետ քով քովի:

Այդպէս է փողոցային մամուլը, ինչ որ ինքն է գործում, գալաւ է, դա բարոյական է, բայց հէնց որ իր ասածը կրկնում է մի ուրիշը և այդ որոշ դէպքում ցանկալի չէ, նա գոռում է «մատնութիւն»:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 10 փետրվարի

Սրանից մի քանի տարի առաջ բժիշկ Երուանդ Մինասեանը մի շատ համակրելի միտք յղանալով՝ այստեղ Թիֆլիս և ապա Բագու ստորագրութեամբ փող հաւաքեց, որպէսզի այդ գումարով իր հայրենիքում՝ Տրապիզոնում մի բուժարան—սանատօրիում—բանայ մեր չքաւոր հիւանդ ազգայինների համար:

Մենք անհամբեր սպասել ենք սանատօրիումի բացմանը: Իսկ այժմ, երբ Թիւրքիայում արդէն սահմանադրական կարգեր են մտած, հասկանալի է թէ խօսք չէ կարող լինել արգելքների մասին, եթէ երբևիցէ նրանք տեղի են ունեցել սանատօրիումի նման անմեղ և գեղեցիկ ձեռնարկութեան գլուխ բերելու համար, մանաւանդ որ գործի լաւ սկզբնաւորութեան համար արդէն պատրաստ է՝ ոմանց ասելով 10,000 րուբլի, իսկ ուրիշների ասելով էլ՝ աւելի:

Բայց այսպէս թէ այնպէս, քանի որ օգտակար գործը դեռ չէ սկսված ու տեղական հանգամանքներն էլ նախկիններից շատ աւելի նպաստաւոր են, մեր համեստ կարծիքով՝ պ. Եր. Մինասեանը շատ լաւ կանէր, եթէ հանրային քննութեան առարկայ դարձնէր իր կազմած ծրագիրը և այնուհետև անմիջապէս ձեռնարկէր գործի: Ասած է՝ «մի խելքը լաւ է, բայց երկուսը աւելի լաւ»:

Թիֆլիսի նուիրատուներից մինը

—

Թիֆլիս, 10 փետրվարի

Իմ հանգուցեալ ամուսին՝ ողբացեալ Գրիգոր Վանցեանը անցեալ տարի, մայիսի 3-ին, (պօստի անդորրագրով № 879) ուղարկած է Պօլիս Իզմիրլեան մրցանակաբաշխութեան իր մի նոր աշխատութիւնը—«Նախահայ լեզուի քերականութիւն» վերնագրով, սակայն մինչև այժմ ոչ մի տեղեկութիւն չունեմ իմ ամուսնու այս գրուածքի մասին: Իմ մասնաւոր հաւաքած տեղեկութիւններից իմանում եմ, որ Պօլսի հայոց պատրիարքարանը այդպիսի մի ձեռագիր չէ մտել: Ինչպէս երևում է, պ. Ստեփանեանը, որին ուղղած է հեղինակը իր ձեռագիրը, չէ ներկայացրել ըստ պատկանելոյն: Սրանով հրաւիրում եմ պարոնին՝ այդ ձեռագիրը անպայման և առանց յապաղման ներկայացնել մրցանակաբաշխութեան կամ յետ ուղարկել ինձ, հակառակ դէպքում ես ստիպված պիտի լինեմ դիմելու օրէնքի պաշտպանութեանը:

Խնդրում եմ բոլոր լրագիրներին արտատպել իմ նամակը:

Այրի Մարիամ Վանցեան

—

Թիֆլիս, 9 փետրվարի

Ձեր լրագրի № 22-ում Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան մի անյայտ անդամի տուած հարցերի առիթով խորհուրդը յայտնում է հետևեալը.

1. Ծննդեան տօներից յետոյ, արդարև, ընկերութիւնը ստացել է մի անյայտ նուիրատուից կնքված արկղներով սուդակ, կուտում և լէշչ ձուկը, իսկ երկաթուղու նակլադնօյի վրա գրված է եղել, անշուշտ սխալմամբ, սևրիւգա:

Նուիրատուից ոչ մի նամակ ընկերութիւնը չէ ստացել, թէ իրօք ինչ է եղել նրա ուղարկածը: Թիւրիմացութիւնը պարզելու համար խորհուրդը նոյն օրն իսկ դիմել է Պրիստանների պրոմիսլան, ենթադրելով որ այնտեղից կարող է ուղարկված լինել նուէրը, բայց մինչև ցարդ պատասխան չէ ստացված:

Դժուար է հաւատալ, որ ներկայ ժամանակը, մանաւանդ տօներին, երբ սևրիւգայի պուդը արժէ 20 րուբլի, ընկերութեանս ճաշարանի համար ուղարկվէր 12 պուդ սևրիւգա, որի արժողութիւնը կանի 240 րուբլի:

2. Ընկերութեան ճաշարանի համար, այո, գնվել է նոյն տեսակի սուդակ ձուկը, միայն ոչ թէ 5—6 րուբլով պուդը, այլ 4 ր. 50 կ., իսկ նուէրը ծախվել է 3 ր.: Պատճառը շատ պարզ է: Ճաշարանի համար ձուկը գնվել է յունվարի 5-ին, այն միջոցին, երբ նրա գինը շատ բարձր էր, իսկ նուէրը ծախվել է յունվարի 9-ին, երբ շուկայում գինը ընկած էր, և գնողը ձկան վաճառական է. ստացված ձկան մի մասը գործադրվել է աշակերտական ճաշարանում. նոյն ճաշարանի վրա գործադրվել է այն փողը, որը գոյացել է ծախված ձկից: Ծախելը նպատակայարմար է գտնվել այն պատճառով, որ բոլորը իսկոյն գործադրել չէր կարելի, իսկ պահելու համար յարմարութիւն չէ եղել:

Խորհուրդը, հաղորդելով լրագրի միջոցով այս տեղեկութիւնները, միաժամանակ աւելորդ չէ համարում նկատել, որ ընկերութեան ամեն մի իսկապէս սրտացաւ անդամ, նոյնպէս հասարակութեան ամեն մէկը, այսպիսի դէպքերում իրանց հետաքրքրող տեղեկութիւնները աւելի շուտ և ճիշդ կարող են ստանալ անմիջապէս խորհրդի գրասենեակում, որը համարեա ամբողջ օրը բաց է, հետևապէս և մամուլի էջերը ազատ կը մնան աւելի կարևոր նիւթերի համար:

Խորհուրդ

Ծանօթ. խմբ. — Տպագրելով խորհրդի բացատրութիւնը, մենք մեր կողմից այս կասենք. ի հարկէ, լաւ կը լինի, որ այդ տեսակ հարցերով մամուլը չը զբաղեցնեն, բայց մի անգամ, որ հարցը դրված է, պէտք է լուսաբանվի: Խորհրդի ներկայ բացատրութիւնը չէ պարզաբանում խնդիրը ամբողջովին. մի բան պարզ է, այն, որ խորհրդին ուղարկել են ձուկն, անշուշտ, այն նպատակով, որ բարեգործական ընկերութեանը, իբրև քաղաքի հայոց միակ բարեգործական հաստատութիւն, կը դիմեն բազմաթիւ չքաւորներ տօն օրերին: Բայց խորհուրդը, փոխանակ բաժանելու չքաւոր ընտանիքներին, թոյլ է տուել իրան ծախել և փողի վերածել: Ի՞նչ իրաւունքով. խորհուրդը երբ մերժում է հարիւրաւոր դիմողներին, որոնք օգնութիւն են խնդրում, պատճառաբանում է նրանով, որ որոշված գումարն արդէն վերջացած է: Բայց խորհուրդն ստանում է 12 պուդ ձուկն, նա գիտէ, որ կան հարիւրաւոր ընտանիքներ, որոնք Ջրօրհնէքին նոյն իսկ ցամաք հաց չունեն, և նա փոխանակ բաժանելու չքաւոր ընտանիքներին՝ ծախում է ձուկն, որպէսզի դրամ ստանայ: Ի՞նչ անուն տանք այդ վարմունքին: Խորհուրդը խնայում է տալ չքաւորներին նոյնիսկ ուրիշների տուած նուէրը:

—

ՀԱՇԻՒ

Հանգանակիչ Մասնաժողովի ի նպաստ Թիւրքահայաստանի հայ տառապեալների

—

Վերջին անգամ Հանգանակիչ Մասնաժողովը ներկայացրել էր մինչ յունվարի 9-ը իր ընդունած նուէրների հաշիւը:

Այնուհետև ստացվել է. 1) Թիֆլիսում՝ իշխանուհի Մ. Թումանեանից 10 ր., 2) Թիֆլիսում՝ պ. Յակոբ Տէր-Յակոբեանից ի յիշատակ իր հանգուցեալ մօր 50 ր., 3) Թիֆլիսում՝ տիկին Դարիա Յովհաննիսեանից 5 ր., 4) Թիֆլիսում՝ «Գործի» խմբագրութիւնից 2-դ անգամ 400 ր., 5) Վլադիկավկազից՝ Սաւիկեան քահանայի միջոցով 200 ր., 6) Աստրախանից՝ պ. Ս. Վ. Թամազեանից 50 ր., 7) Թիֆլիսում՝ պ. Մնացական Խունունցից 100 ր., 8) Թիֆլիսում՝ օր. Շուշ. Բայսօղլեանից 3 ր., 9) Թիֆլիսում՝ «Գործի» խմբագրութիւնից 3-դ անգամ 500 ր., 10) «Մշակի» խմբագրութիւնից 7-դ անգամ 950 ր, 11) Նոր-Նախիջևանից՝ Թեմական դպրոցի տեսուչ պ. Շահ-Ազիզի միջոցով, Թեմական դպրոցի, Գոգոյեան օրիորդաց դպրոցի, Հռիփսիմեան օր. դպրոցի, ս. Սանդխտեան, ս. Համբարձման և ս. Թորոսի ծխական դպրոցների ուսուցիչներից և դպրոցի տնտեսից 160 ր., 12) Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգ. Ընկերութիւնից, պ. Գր. Չալխուշեանի միջոցով 300 ր., 13) Սամարկանդից՝ պ. Յ. Շաւարշի միջոցով, այնտեղ հանգանակված 275 ր.: Ընդամենը 2993 րուբլի:

Այս գումարից Մասնաժողովս ամսիս 11-ին փոխադրեց դարձեալ Կ. Պօլիս ռուսական դեսպանատան, Իզմիրլեան ս. պատրիարքին յանձնելու համար 5000 ֆրանկ: Մինչև այժմ փոխադրված է Թիւրքահայաստանի և Զէյթունի սովեալների համար ընդամենը 36,000 ֆր.:

Նախագահ Հանգ. Մասնաժողովի՝
Ալէք. Մելիք-Ազարեան
Գանձապահ՝ Ա. Սարուխանեան
Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

11 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մի օրում խօլերայով հիւանդացան 10, մեռան 3 հոգի: Ֆինլանդիայի Իւկկա քաղաքում հիւանդացել են 11, մեռել են 5 հոգի:

Ժամը 8 և 25 րօպէին արտասահմանից եկաւ յունական գահաժառանգ Նիկօլայը կնոջ հետ միասին:

ՄՈՍԿՎԱ: Եկան արտասահմանեան բանկիրների ներկայացուցիչները քաղաքային փոխառութիւնները իրագործելու համար:

ՌՈՍՏՕՎ Դ/վ.: Վլադիկավկազեան գծի վրա շատ տեղերում վերստին փոթորիկ է, որ շատ է դժուարեցնում երկաթուղային երթևեկութիւնը:

ԿԵՐՉ: Նահանգական ատեանի որոշմամբ մէշչանների վարչութեան ամբողջ կազմը յանձնվում է դատարանի ձեռքը զեղծումներ գործելու համար:

ԿԻԵՎ: Հերթական ապրանքների առաքումը սկսվեց. Հարաւ-արևմտեան գծի տարածութեամբ աշխատում են մօտ 50,000 բանւորներ: Իւրաքանչիւր օր ծախք է գնում 50,000 րուբլի:

ԵԱՐՕՍԼԱՒ: Խօլերայի համաճարակի սկզբից մինչև օրս նահանգում հիւանդացել են 39, մեռել են 16 հոգի:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ: Երկու շինական հաստատութիւններ և կօզակային ութ ստանիցաներ հասարակական դատավճիռներով միջնորդում են փակել խմիչքեղէնների հաստատութիւնները:

ՍՏԱՎՐՕՊՕԼ: Փոթորիկ է: Երկու օր է, որ գնացքների երթևեկութիւնը կանգ է առել:

ԲԵՐԼԻՆ: Այսօր Շպիլհագէնի ութսունամեայ տարեդարձի առիթով մամուլը ողջունում է գրողին և յօդուածներ է նուիրել նրան:

ԼՈՆԴՈՆ: Շերնէսից հաղորդում են, որ «Ինդօմիտաբլ» զրահանաւի միջից գողացել են 500 ֆունտ ստէրլինգ և 2000 ֆունտ ոսկի:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Պուկիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Փ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Ջրաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Սիֆիլիս, վեներական, միզասեռական և մորթու ցաւեր
Ընդունելութիւն ամեն օր } 12—2 ժ. ցեր. 5—7 ժ. երեկ.
Սօլօլակ, Բէհբութեան փողոց № 33.
(օ. մ.) 100—47

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով, հիւանդների ընդունելութիւնը ընդհատված է:
(օ. մ.) 50—40

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ:
Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի.
100—95

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Վելիամինօվսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—49

Թիֆլիսից մեկնելու պատճառով
◆ ԾԱԽՎՈՒՄ Է ◆
ԲԱԿԱԼԷՅՆԻ ԵՒ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ
ունեցող
Մի շահաւէտ խանութ
Հասցէն տեղեկանալ «Մշակի» գրասենեակում:
(ու. ե.) 131. 2—1

ՄԵՐՎԻ ծխական հոգաբարձութիւնը հրաւիրում է Մերվի հայ հասարակութեան և շրջակայ գաղութների համար, որ ունի 500—600 ծուխ, ԴՊՐՈՑԱՒԱՐՏ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՄ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒ: Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով. Мервъ, Акопу Исаевичу Аветисову.
(օ. մ.) 107. 6—4

Նոր լոյս տեսաւ
ԷՄԻՆԵԱՆ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՍՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
Մասն I. Ընդհանուր ազգագրական յօդուածներ. 1) Ազգագրութիւն, նրա բացատրութիւնը և սահմանները, 2) Նիւթեր հայ ազգագրութեան պատմութեան, 3) Համեմատական կրօնախօսութիւն, 4) Ֆօլկլօր, 5) Յակոբ Գրիմմ, նրա դպրոցը և նրա քննադատները: Մասն II. Կուլտուրի պատմութիւն Լիպպերտի: Էջ. Զ+124+221.
Գինն է ճանապարհածախսով 1 ր. (2 ֆր. 50 ս.): 5 օրինակը միանուագ՝ 3 ր. 75 կ. (ճան. ծախսով): Բոլոր եօթը հատորը միանուագ՝ 6 ր. 50 կ. (ճան. ծախսով):
Դիմել՝ Правленіе Лазаревскаго Института вост. яз., Москва (Institut Lazareff, Moscou).
(ու. կ.) 66. 5—5

Садовое заведеніе „НИКОЗИ“
Պտղատու ծառերի տնկարաններ
Ս. Ս. ԽԵՏԱԳՈՒՐԻ
„ՆԻԿՕԶԻ“ կալուածքում
(Գօրու գաւառ, Թիֆլիսի նահանգում)
Վաճառվում են
խնձորենու, տանձենու, դեղձի, կեռասի և ուրիշ արտասահմանեան ամենալաւ տեսակների պատուաստած տունկեր: Ցուցակները ըստ պահանջի ուղարկվում են ձրի:
Հասցէն՝ Тифлисъ, Сололакская 15. С. С. Хетагури.
(հ. կ.) 101. 10—5

Ձեռնտու պայմաններով ծախվում են հետևեալ հողերը.
1. Գօրու գաւառի Ախալքալաք գիւղում, «Սատարխնօ» կոչված տեղում՝ 66 դեսեատին 1520 ք. սաժ.—արօտատեղի և ցանքի համար.
2. Նոյն գիւղում՝ խաղողի այգի—2 դեսեատին.
3. Սանահինում և Վարնակում—205 դեսեատին.
4. Կախետինսկայա փողոցում և Նաւթլուղում—3 դեսեատին.
5. Ղարայազում—50 դեսեատին.
Դիմել՝ Թիֆլիս, Համբարձում Տէր-Ղազարեանին, Խրխրեանի գրավաճառանոցում, Երևանեան հրապարակի վրա:
(օ. մ.) 132. 3—1



ՆՈՐՈՒԹԻՒՆ!!!
Ծոցի ժամացոյց մշտական օրացոյցով
Այդ ժամացոյցը ցոյց է տալիս օրը, ամսաթիւը և ամիսը: Գիշերվայ իւրաքանչիւր 12 ժամին սլաքները աւտոմատիկ կերպով թռիչք են անում և ցոյց են տալիս եկող օրը և ամսաթիւը: Բացի դրանից, այդ ժամացոյցը իսկական «անկէր» է, 15 քար. ընթացքով, սև պողպատից, լարվում է 40 ժամը մի անգամ մետալ. ցիֆերբլատով և ուղիղ ընթացքով: ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է!
Էժան ժամացոյցների ետևից մի ընկնէք, այլ բերել տուէք մեզանից այդ ժամացոյցը և դուք մեզանից միշտ շնորհակալ կը մնաք: Գինը միայն 4 ր. 50 կ., 2 հատը 8 ր. 50 կ.: Ուղարկվում է վերադիր վճարով և առանց կանխավճարի, 6 տարվայ երաշխաւորութեամբ: Առաքումը 1 հատից մինչև 4 հատը 40 կ. (Սիբիր 75 կ.): Մօդային փոքրիկ շղթաներ իսկական նոր ոսկուց, գեղեցկաշէն բրէլօկով 75 կ. և 1 ր. 50 կ., երկու հատը 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.: Խնդրում ենք վերաբերվել մեզ կատարեալ վստահութեամբ, իսկ մենք համարձակվում ենք հաւատացնել ձեզ, որ ամեն ջանք գործ կը դնենք ապագայում եւ արդարացնել մեզ այնքան յաճախ արտայայտված վստահութիւնը և շնորհակալութիւնը:
Հասցէն՝ Штрумфельдъ, Варшава, Св. Креста 48. Отд. 23.
(յ. 3, 16, 30, փ. 13, 27, մ. 13) (66371) 1. 6—4

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская 7